2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

Պետական մարմինը՝ *ՀՀ ՏԿԵՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ*

Հայտի հաստատման ամսաթիվը՝ *01.03.2023թ.*

1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեն, որպես պետական սեփականություն հանդիսացող ջրային և ոչ մրցակցային ջրամատակարարման համակարգերի կառավարման ու օգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականություն մշակող և իրականացնող մարմին, ապահովում է խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ինչպես նաև ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ոլորտներում համակարգերի հուսալի և անվտանգ շահագործումը:

Ոլորտային քաղաքականության հիմնական թիրախներն են

- Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում առկա խնդիրների լուծում, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարելավում և սպառողների պահանջների բավարարում,
- Ոռոգման ոլորտում առկա խնդիրները լուծելու և վիճակը բարելավելու նպատակով նախատեսվում է իրականացնել անհրաժեշտ օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումներ,
- Ոռոգման համակարգերը շարունակաբար արդի ջրաչափական սարքավորումներով կահավորում և տվյալների հավաքման ու վերահսկողական համակարգով հագեցում,
- Ոռոգման համակարգերում շահագործման պայմանների տեխնիկական վիճակի գնահատում և բարելավում,
- Ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր,
- 2021-2026 թվականների ընթացքում Ջրամբարաշինության (Կապսի և Վեդու ջրամբարներ) ծրագրերի նախապատրաստում և իրականացում,
- Ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակի ապահովման հնարավորությունների ստեղծում, ինքնահոս համակարգերի և նոր ջրամբարների նախագծում և շինարարություն,
- «Արփա-Սևան» թունելի անվտանգ շահագործման շարունակականության ապահովում
- Խոնավ (գերխոնավ) գյուղատնտեսական հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման աշխատանքների իրականացում,
- Հեղեղման ռիսկի նախնական գնահատման իրականացում, հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզների կազմում, հեղեղումների ռիսկի կառավարման պլանների կազմում,
- Ոռոգման համակարգերում գույքի առկայության և վիճակի գնահատում,
- Գործող ջրամբարների պատշաճ շահագործում,

2015թ. սեպտեմբերին աշխարհի ավելի քան 150 երկրների առաջնորդներ ՄԱԿ-ի՝ Նյու Յորքի կենտրոնական գրասենյակում մասնակցեցին ՄԱԿ-ի Կայուն զարգացման

գագաթնաժողովին (ԿԶՆ)՝ պաշտոնապես ընդունելով Կայուն զարգացման 2030 օրակարգը, որն այժմ և ապագայում մարդկանց և ամբողջ մոլորակի համար ապահովում է խաղաղության և բարգավաճման ընդհանուր նախագիծ:

Օրակարգի հիմքը 2016 թվականի հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ մտած Կայուն զարգացման 17 նպատակներն են, որոնք համընդհանուր գործընկերության շրջանակում հրատապ գործելու կոչ են բոլոր՝ ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներին: ՄԱԿ-ի 193 անդամ-պետությունները, այդ թվում՝ Հայաստանը, համաձայնության են եկել «Վերափոխենք աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030» խորագրով փաստաթղթի շուրջ:

Կայուն զարգացման 2030 օրակարգը հիմնված է 3 փոխկապակցված տարրերի վրա՝ տնտեսական աճ, սոցիալական ինտեգրում և շրջակա միջավայրի պահպանություն:

Ջուրը կայուն զարգացման հիմքն է, և կայուն զարգացման 6-րդ նպատակն ու թիրախները սերտորեն փոխկապակցված են մյուս բոլոր նպատակներին ու թիրախներին:

Սերտորեն փոխկապակցված են նաև ԿԶՆ 6 բոլոր թիրախները. ամեն դեպքում ջրի և սանիտարիայի հասանելիություն և կայուն կառավարում ապահովելու համար անհրաժեշտ է կառավարել մրցակցային ջրօգտագործումները և օգտվել ջրօգտագործման, վերաօգտագործման ու վերաշրջանառության, էկոհամակարգերի պահպանության և ջրի որակի առկա համազդեցություններից:

2. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ՀՀ ջրային օրենսգիրք, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթներ, ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքը, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումների մասով ընդունված որոշումները, գերակա խնդիրներն ու միջոցառումները, ՀՀ կառավարության 2021-2026թթ.ծրագիր:

Այս իրավական ակտերով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային դրույթները և ուղղությունները:

Հայաստանի Հանրապետության ջրային ոլորտում խնդիրների լուծումը պետք է իրականացվի՝ հիմք ընդունելով հետևյալ գերակայությունները.

- Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում առկա խնդիրների լուծում, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարելավում և սպառողների պահանջների բավարարում,
- Ոռոգման համակարգերը շարունակաբար արդի ջրաչափական սարքավորումներով կահավորում և տվյալների հավաքման ու վերահսկողական համակարգով հագեցում,

- Հեղեղման ռիսկի նախնական գնահատման իրականացում, հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզների կազմում, հեղեղումների ռիսկի կառավարման պլանների կազմում,
- Ոռոգման ծառայություններ մատուցող և ոռոգում-ջրառ իրականացնող ընկերությունների սուբսիդավորում
- Ոռոգման համակարգի զարգացմանն ուղղված միջոցառումներ և ոռոգման համակարգի հիմնանորոգում
- Ջրամբարաշինության ծրագրերի նախապատրաստում և իրականացում, հիդրոտեխնիկական կառույցների հիմնանորոգում, Օրվա կարգավորման ջրավազանների կառուցում և վերակառուցում
- Արփա-Սևան թունելի ջրային համակարգի հավատարմագրային կառավարում, վթարային հատվածների հիմնանորոգում
- Կոլեկտորադրենաժային ծառայություններ

3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

- 1004 - Ոռոգման համակարգի առողջացում,
- 1017 - Որոտան-Արփա-Սևան թունելի ջրային համակարգի կառավարում,
- 1027 - Կոլեկտորադրենաժային ծառայություններ,
- 1072 - Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում,
- 1109 - Ջրային տնտեսության ոլորտում պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում և մոնիտորինգ:

3.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

Ջրային կոմիտեի կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների մեջ առանձնացվում են պարտադիր և հայեցողական ծախսերը, մասնավորապես, պարտադիր ծախսերի մեջ ներառված են Ջրային կոմիտեի վարչական ապարատի պահպանման ծախսերը, որի համար իրավական հիմք է հանդիսանում ՀՀ ջրային օրենսգրքի 1.1 հոդվածը, միջազգային պայմանագրերով վավերացված վարկային և դրամաշնորհային միջոցառումները, իսկ մնացած միջոցառումները ներառված են հայեցողական ծախսերում:

3.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

<u>3.2.1 Ջրային տնտեսության ոլորտում ծրագրերի համակարգում և մոնիտորինգ</u>

ՀՀ ջրային օրենսգրքի հոդված 1.1-ի և 12-ի հոդվածների համաձայն՝ ՀՀ կառավարության 17.10.2002թ. N 1653-Ն որոշմամբ ջրային համակարգերի կառավարման լիազոր մարմին է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեն, որի իրավահաջորդն է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեն: Ջրային կոմիտեն իր նպատակներն ու խնդիրներն իրականացնում է վարչական ապարատի միջոցով: ՀՀ վարչապետի 11.06.2018թ. N 706-Ա որոշմամբ Ջրային կոմիտեի աշխատողների առավելագույն թվաքանակը սահմանվել է 75 հաստիքային միավոր, որը նաև հիմք է ընդունվել պահպանման ծախսերի հաշվարկման համար:

Ծախսերի հաշվարկների հիմքում ընկած են նաև ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով սահմանված նորմատիվները, «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով աշխատավարձերի բնականոն աճի, եկամտային ու քաղաքացիական ծառայողների պարգևատրման ֆոնդի հաշվարկները:

ՀՀ 2024 թվականի համար Ջրային կոմիտեի վարչական ապարատի պահպանման համար առաջարկվում է նախատեսել **444,524.5** հազար դրամ, իսկ տեխնիկական հագեցվածությունը բարելավելու նպատակով նախատեսվում է ձեռք բերել վարչական սարքավորումներ՝ **13,689.0** հազար դրամ, ընդամենը՝ **458,213.5** հազար դրամ:

3.2.2 Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրում

ՄԺԾԾ ժամանակահատվածում «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող հիմնական ծախսային ուղղությունը լինելու է գործող սակագնի պայմաններում փոխհատուցվող ոռոգման ջրի ինքնարժեքի հետ կապված ծախսերը, քանի որ «Ջրառ» ՓԲԸ-ի համար մինչ օրս գործում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007թ. մարտի 1-ի N 61-Ա որոշմամբ հաստատված սակագները՝ 1 խմ ինքնահոս ջրի համար սահմանված է 1.01 դրամ, իսկ 1 խմ մեխանիկական ջրի համար՝ 11.52 դրամ, միչդեռ, 2023 թվականի հունվարի 1-ից ծախսերի մեջ նվազագույն աշխատավարձը հաշվարկվում է 75.0 հազար դրամ, որը 2007թ. կազմել է 20.0 հազար դրամ, 2022 թվականից էլէներգիայի միջին սակագինը կազմում է 53.5 դրամ, իսկ 2007թ. կազմել է 14.67 դրամ, ջրի ռեսուրսավճարը 2007թ. կազմել է 0.020 դրամ, սակայն, ՀՀ օրենսդրության համաձայն, 2018 թվականից յուրաքանչյուր տարի ավելանալով 0.02 դրամով, այժմ կազմում է 0.26 դրամ: Ընկերության համար ֆինանսական մեծ պարտավորություն է նաև ՀՀ պետական բյուջեից հատկացվող սուբսիդիայից հարկվող ավելացված արժեքի հարկը, ինչպես նաև, ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների գների պարբերաբար թանկացումները: Հատկապես անհրաժեշտ է հաշվի առնել, որ էլէներգիայի գծով 2022 թվականի փաստացի ծախսը կազմել է 33.9 մլն կՎտ/ժ կամ 1,562.8 մլն դրամ, իսկ 2023 թվականի ծախսերի և եկամուտների նախահաշվով նախատեսվել է 37.72 մլն կՎտժ էլէներգիա, որի դիմաց հավելյալ ծախսը կազմում է 177.4 մլն դրամ:

2023 թվականին կանխատեվել է 3,291.3 մլն դրամի ծախս, որի մեջ ներառվում են աշխատավարձի, էլ. էներգիայի, նյութերի ձեռքբերման, ջրանցքների նորոգման պահպանման և այլ ծախսեր:

Ջրային համակարգերի կառավարման արդյունավետությունը պայմանավորված է նաև ճիշտ սակագնային քաղաքականության իրականացմամբ: Ներկայումս գործող սակագինը թույլ չի տալիս փոխհատուցել ոռոգման ջրի ինքնարժեքի հետ կապված ծախսերը, իսկ նշված ծախսերի հատուցման համար պետական բյուջեից անհրաժեշտ սուբսիդիաները շատ հիմնավոր և կարևոր են, միևնույն ժամանակ, հատկացման հնարավորություններն էլ սահմանափակ են:

2023 թվականին ջրամատակարարման ծավալը կանխատեսվել է 939.3 մլն խմ, որից ինքնահոս եղանակով 857.9 մլն խմ, մեխանիկական եղանակով 81.4 մլն խմ: 2023 թվականին նախատեսվել է 1,740.2 մլն դրամ էլ. էներգիայի ծախս:

Հաշվարկների արդյունքում, 2023 թվականին 1 խմ մեխանիկական եղանակով մատակարարված ջրի համար կատարված ծախսը կազմում է 21.38 դրամ (1,740.2,/81.4), սակագինը՝ 11.52 դրամ: 2023 թվականին 1 խմ մեխանիկական եղանակով մատակարարված ջրի համար սուբսիդիայի չափը կկազմի 9.86 դրամ (21.38-11.52): 2023 թվականին 1 խմ ինքնահոս եղանակով մատակարարված ջրի համար կատարված ծախսը կազմում է 1.81 դրամ ((3,291.3-1,740.2)/857.9), սակագինը՝ 1.01 դրամ: 2023 թվականին 1խմ ինքնահոս եղանակով մատակարարված ջրի համար սուբսիդիայի չափը կկազմի 0.8 դրամ (1.81-1.01):

Հիմք ընդունելով 2023 թվականի նախահաշվի տվյալները և 2024-2026թթ. կանխատեսվող արդյունքային ցուցանիշները՝ ՀՀ 2024 թվականի համար առաջարկվում է նախատեսել **1,526.1 մլն դրամ** (85*9.86+860*0.8), 2025 թվականի համար՝ 1,557.28 մլն դրամ իսկ 2026 թվականի համար՝ 1,597.52 մլն դրամ:

3.2.3 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում

Համաձայն ՀՀ կառավարության 2021թ. նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N1 հավելվածի ՀՀ ՏԿԵՆ բաժնի 78.1 կետի, 2023 թվականին պետք է մշակել և իրականացնել «Ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման ռազմավարական ծրագրի մշակում և իրականացում» ծրագիր, սակայն, ՀՀ վարչապետի՝ 2023թ. հունվարի 31-ին Ջրային կոմիտեում անցկացված խորհրդակցության N Վ/21-2023 արձանագրության 5-րդ կետի գ ենթակետի համաձայն՝ անհրաժեշտ է մշակել ջրային ոլորտի համապարփակ ռազմավարություն:

Ոլորտը դեռևս սուբսիդավորվում է՝ հիմնականում կապված ոչ ամբողջական ծախսածածկող գին ունենալու և հատկապես՝ թերհավաքագրման հետ:

ՀՀ պետական բյուջեից ոռոգման ջրի մատակարարման ծառայություններ մատուցող կազմակերպություններին սուբսիդիաները հիմնականում տրվել են ընթացիկ

տարվա ֆինանսական հոսքերով պլանավորված ֆինանսական ճեղքվածքի մարման համար: Ընդ որում, ՀՀ պետական բյուջեից հատկացված սուբսիդիաները վերջին տարիներին հիմնականում ուղղված էին ջրամատակարար կազմակերպությունների կողմից ծախսված էլ.էներգիայի գծով ծախսի մարմանը, մասնավորապես 2022թ. այն կազմել է շուրջ 65 %-ը :

Ջրօգտագործողների ընկերություններին պետական ֆինանսական աջակցության չափաքանակների հատկացման գաղափարախոսությունը (ներառյալ ջրօգտագործողների ընկերությունների կողմից հետագա տարիների համար ջրօգտագործողներին վաճառվելիք ոռոգման ջրի վճարների առավելագույն սահմանները) սահմանված են Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի նիստի N 33 «Ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության բարելավման ռազմավարությամբ», որտեղ կանխատեսումները կատարված են մինչև 2021 թվականը ներառյալ:

Ներկայումս ՋՕԸ-երը չեն ապահովում ինքնածախսածածկման սկզբունքը: Ոռոգման ջրի միջին ինքնարժեքը տատանվում է 11.5 – 113 դրամ/մ3՝ կախված մեխանիկական արտադրության ջրի ծավալներից (հիմնականում սահմանամերձ տարածքներում), սակայն ոռոգման ջրի վճար է սահմանված 11 դրամ/մ^3:

Հարկ է նշել, որ վերը նշված ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ցուցանիշների և փաստացի ցուցանիշների միջև առկա են էական շեղումներ:

2017 թվականին ապահովվել է 80,6 հազ. հա ջրամատակարարում, 2018 թվականին՝ 81,6 հազար հա, 2019 թվականին՝ 82.4 հազ. հա, 2020 թվականին՝ 85.4 հազ. հա, 2021 թվականին՝ 87,3 հազ. հա, 2022թ.՝ 91.0 հազ.հա:

Ոռոգման ջրի դիմաց 2018 թվականին ՋՕԸ-երի կողմից գանձվել է 3,284.0 մլն դրամ, 2019 թվականին՝ 4,047.7 մլն դրամ, 2020 թվականին՝ 3,740.3 մլն դրամ, 2021 թվականին՝ 4,284.1 մլն դրամ, 2022 թվականին՝ 4,661.4 մլն դրամ:

Հաշվի առնելով, որ 2023թ. ՋՕԸ-երի բյուջեները հատատված չեն, հաստատվելուց հետո կներկայացվեն ճշգրտված տվյալները: Միաժամանակ, 2024 թվականի ֆինանսական աջակցության կանխատեսման համար հիմք է ընդունվել ՋՕԸ-երի 2023 թվականի բյուջեների նախագծերը, համաձայն որի ֆինանսական ճեղքվածքը կազմում է 9,786,570.4 հազար դրամ: Առաջարկվում է 2024-2026թթ. յուրաքանչյուրտարվա համար նախատեսել **9,786,570.4** հազար դրամ

3.2.4 Փոքր և միջին ջրամբարների կառուցման խորհրդատվություն և կառավարում

Ջրամբարաշինական ծրագրերի իրականացմանը և Ջրային կոմիտեի այլ կանոնադրական խնդիրների լուծմանն աջակցող մասնագիտական ծառայություններ ձեռք բերելու նպատակով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով հատկացվել է

66,600.0 հազար դրամ: 2024-2026թթ. համար առաջարկվում է նախատեսել **66,600.0** հազար դրամ:

3.2.5 Արարատյան ջրավազանի ձկնաբուծական տնտեսությունների ելքային ջրերի վերաօգտագործման ծրագիր

Տարբեր մասնագիտական ուսումնասիրություններով և հաշվարկներով ապացուցված է, որ ձկնաբուծական տնտեսությունների կողմից օգտագործվող տարեկան շուրջ 600-800 մլն մ3 ստորերկրյա քաղցրահամ ջրերը ձկնաբուծական տնտեսությունների կողմից օգտագործվելուց հետո անարդյունավետ կերպով հոսում են հանրապետության սահմաններից դուրս, մինչդեռ պետությունը հսկայական ծախսերով, էական կորուստներով և տնտեսական ու բնապահպանական խնդիրներ հարուցելով ստիպված Սևանա լճի ջուրը ոռոգման նպատակով հասցնում է Արարատյան դաշտի հողօգտագործողներին: Տարիներ շարունակ և ավանդաբար չի դիտարկվել ձկնաբուծական տնտեսությունների ելքային ջրերի արդյունավետ օգտագործման հնարավորությունները՝ նկատի ունենալով որ այդ տնտեսությունները տեղակայված են առավել ցածրադիր նիշերում և ելքային ջրերի օգտագործումը հնարավոր է կազմակերպել միայն մեխանիկական եղանակով, ինչը համարվել է ծախսատար է և ոչ արդյունավետ: Այս մոտեցումը վերանայման կարիք ունի՝ հաշվի առնելով ժամանակակից տեխնոլոգիաների, բարձր արդյունավետությամբ պոմպերի և արևային էներգիայի օգտագործման ներկայիս պոտենցիալը:

Հաշվի առնելով, որ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով հատկացվել է հիդրոլոգիական և ինժեներական ուսումնասիրությունների համար շուրջ 100 մլն ՀՀ դրամ, ուստի 2024թ-ին նախատեսվում է իրականացնել այդ ուսումնասիրությունների արդյունքներով կապիտալ ներդրումներ՝ հիմնելու արևային կայաններով հագեցած բարձր արդյունավետությամբ ժամանակակից պոմպակայաններ:

Վերը նշված 1-ին փուլի շրջանակներում ակնկալվում է ձեռք բերել մասնագիտական խորհրդատվական և նախագծային ծառայություններ, որի շրջանակներում ակնկալվում է ստանալ հստակ պատկեր ձկնաբուծարաններից ելքային ջրաքանակների, դրանց որակական պարամետրերի և ոռոգման նպատակով կիրառելիության, ինքնահոս եղանակով և մեխանիկական եղանակով կիրառելիության մասնաբաժինների վերաբերյալ, ինչպես նաև այդ ջրաքանակների օգտագործումն ապահովող ոռոգման ցանցերի և տիպային պոմպակայանի նախագծային փաթեթներ:

2-րդ փուլի շրջանակներում նախատեսվում է կապիտալ ներդրումներով հիմնել արևային լոկալ կայաններով և ժամանակակից պոմպերով հագեցած պոմպակայաններ և կառուցել ոռոգման ցանցեր՝ ապահովելու տարածաշրջանի ֆերմերներին կայուն ոռոգման ջրամատակարարում, որպես այլընտրանք Սևանա լճից Արարատյան դաշտ հասցվող ջրաքանակներին:

Առաջարկվում է 2024-2026 թթ. յուրաքնաչյուր տարվա համար նախատեսել 1.0 մլրդ դրամ:

3.2.6. Ոռոգման համակարգերի հիմնանորոգում

Ոռոգման ոլորտի կազմակերպությունների կողմից շահագործվող տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամբարների, գլխամասային կառուցվածքների, ջրանցքների, պոմպակայանների և այլ ջրային համակարգերի ամենամյա կապիտալ նորոգումների համար պահանջվում են համապատասխան ֆինանսական միջոցներ: Նշված ջրային համակարգերի կամ դրանց առանձին մասերի կապիտալ նորոգումների չիրականացումն ավելացնում է վթարավտանգ իրավիճակների հավանականությունը, ինչպես նաև արդյունավետ ջրամատակարարման հետ կապված առաջացնում է որոշակի խնդիրներ:

Ոռոգման համակարգերի հիմնանորոգման շնորհիվ կապահովվի ոռոգման ծառայություն իրականացնող ընկերությունների կողմից շահագործվող ոռոգման համակարգերի անխափան շահագործումը, ջրօգտագործողներին ջրի պահանջարկի ապահովումը և ստանձած պայմանագրային պարտավորությունների արդյունավետ կատարմանը:

Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից շահագործվող պետական սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգերում անհրաժեշտություն է առաջացել իրականացնել մի շարք հրատապ և անհետաձգելի հիմնանորոգման աշխատանքներ:

Միջոցառման արդյունավետության համար նպատակահարմար է շարունակել նաև 2024 թվականին, ընդ որում առաջարկվում է 2024թ. համար նախատեսել 500,000.0 հազար դրամ, 2025թ. համար՝ 1,000,000.0 հազար դրամ, իսկ 2026թ. համար՝ 1,000,000.0 հազար դրամ:

3.2.7 Ջրային տնտեսության հիդրոտեխնիկական սարքավորումների տեղադրում

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված է 929,828.9 հազար դրամ՝ 744 արդյունքային ցուցանիշի համար, 2023 թվականին՝ 748 հատ, որի նախահաշվային արժեքը կազմել է 908,086.7, սակայն պայմանագրի կնքման արդյունքում այն նվազել է և կազմել է 717,891.4 հազար դրամ:

Ծրագիրն ավարտվում է 2023 թվականին և 2024 թվականին ծրագրի շրջանակներում ծախսեր չեն նախատեսվում:

3.2.8 Օրվա կարգավորման ջրավազանների կառուցում և վերակառուցում

Օրվա կարգավորման ջրավազանների կառուցմամբ նախատեսվում է կուտակել ցերեկային ժամերին առաջացած պոտենցիալ ջրերը, ինչպես նաև, գիշերային ժամերին հիմնականում չջրման արդյունքում առաջացած ջրի ծավալները՝ հաջորդ օրը առանց տատանումների մատակարարման համար, ոռոգել լրացուցիչ

հողատարածքներ և ապահովել ոռոգելի հողտարածքների բնականոն ոռոգումը, կնվազեն մեխանիկական եղանակով մղված ջրի կորուստները, կապահովվեն որոշակի պոմպակայանների՝ առանց ընդհատումներով շահագործումը և այլն:

Նշված խնդրի լուծումն անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի ջրային համակարգերի օգտագործման արդյունավետության բարձրացման և կայուն զարգացման համար:

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման /այսուհետ ՆՆՓ/ համար նախատեսվել էր 492,962.4 հազար դրամ: Մրցույթի արդյունքներով ընտրված Խորդատուների հետ 2022 թվականի հուլիսի 26-ին կնքվել են պայմանագրեր: ՆՆՓ-երի կազմումն իրականացվել է 2 փուլով, ավարտը նախատեսվել է 2023 թվականի հունվարի 13-ին, սակայն համապատասխան համաձայնագրով աշխատանքների կատարման ժամկետը երկարացվել է 1 ամսով, որի ավարտը սահմանվել է ս/թ փետրվարի 13-ը: «Մոդուլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՆՆՓ-երի ձեռքբերման գործընթացի ձգձգումներ կան, որոնք նախատեսվում են ավարտել 2023 թվականի 1-ին կիսամյակի վերջում՝ չնայած այն հանգամանքի, որ «Մոդուլ» ՍՊԸ-ն ներկայացրել է թվով 5 ՆՆՓ:

Խորհրդատուներից «Հայգյուղշիննախագիծ» ՍՊԸ-ն ներկայացրել է թվով 10 ՕԿՋ-երի նախագիծը, որի արդյունքներով կազմվել է ամփոփ տեղեկանք (ներառյալ նաև «Մոդուլ» ՍՊԸ-ի կողմից ներայացված ՆՆՓ-երը), ինչն էլ հիմք է հանդիսացել ՄԺԾԾ հայտը կազմելիս:

Ըստ ՆՆՓ-երի՝ շինարարության համար նախատեսված տևողությունը կազմում է 12-20 ամիս: 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված գումարը պլանավորվել է հետևյալ սկզբունքով՝ 2023 թվականի կազմակերպել մրցութային գործընթացները, հիմնականում կանխավճարները կտրվեն 2023 թվականի ընթացքում, իսկ շինարարության համար նախատեսված գումարները, ըստ համամասնությամբ, կտրվեն 12 ամսվա կտրվածքով: Փաստորեն 2023թ. կմեկնարկի 31 ՕԿՋ-երի կառուցման և վերակառուցման շինարարական աշխատանքներ: ՀՀ 2023թ. պետական բյուջեով ՕԿՋ-երի կառուցման և վերակառուցման շինարարական աշխատանքների համար 1,500.0 մլն դրամ: 2024 թվականին նախատեսվում է իրականացնել **5,178.8** մլն դրամի շինարարական աշխատանքներ: 2025 թվականին կիրականացվեն մնացած ՕԿՋ-երի շինարարական աշխատանքները՝ **3,118.3** մլն դրամ գումարով:

Հաշվի առնելով, որ նախատեսվող ՕԿՋ-երը բարդ հիդրոտեխնիկական կառույցներ են, շինարարության, ինչպես նաև փորձարկման ժամանակահատվածներում կարող են առաջանալ չնախատեսված խոչընդոտներ և խնդիրներ, ուստի ՕԿՋ-երի շինարարության ավարտը նախատեսվում է 2026 թվականի տարեվերջին:

Ոչ ֆինանսական ցուցանիշ - թվով 30 ՕԿՋ-ի վերակառուցում և կառուցում:

3.2.9. Հեր –Հերի ջրամբարից ինքնահոս ջրատարի կառուցում

2019 թվականին սկսվել է ՀՀ Վայոց ձորի մարզի Հեր-Հերի ջրամբարի ոռոգման ջրթողից ինքնահոս ջրատարի կառուցման գործընթացը: Նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար գումարներ են հատկացվել ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի N 1614-Ն և 2020 թվականի ապրիլի 16-ի N 566-Ն որոշումներով: Ըստ ձեռք բերված նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ շինարարական աշխատանքների ընդհանուր գումարը կազմում է 10,714.7 մլն դրամ:

2023 թվականին կիրականացվեն ՇՄԱԳ և «Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման գործողությունների» ծրագրի իրականացման նպատակով հանրային շահ ճանաչելու և սեփականատերերին փոխհատուցելու խորհրդատուի ընտրության մրցութային գործընթացները, որի համար կշրջանառվի ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Առանց վերը նշված ծրագրի հաստատման և իրագործման հնարավոր չի լինի մեկնարկել շինարարությունը: Նախնական գնահատականներով շինարարական աշխատանքների արդյունքում անհրաժեշտություն կառաջանա 2023-2024 թվականների թվականի համար շուրջ 200.0 մլն դրամի չափով կատարել փոխհատուցում և 5.0 մլն դրամի չափով՝ ՇՄԱԳ-ի իրականացում: Խորհրդատուի մրցույթի արդյունքների ամփոփումից հետո կհստակեցվեն ցուցանիշները և կներկայացվի լրացուցիչ տեղեկատվություն:

2024 թվականին նախատեսվում է իրականացնել **205.0** մլն դրամի շինարարական աշխատանքներ: **2025 թվականին** կիրականացվեն շինարարական աշխատանքները, որի համար կպահանջվի Նախագծանախահաշվային արժեքի 30 տոկոսի չափով կանխավճար և կառուցման նպատակով շինարարության արժեքի 10 տոկոսի չափով հանրագումար, որը կազմում է **4,285.88** մլն դրամ (3214.41 մլն դրամ+1071.5 մլն դրամ): 2026 թվականի անհրաժեշտ է շուրջ **5000.0** մլն դրամ:

Նախատեսվող ջրատարի կառուցման ժամանակահատվածում շինարարության, ինչպես նաև փորձարկման ժամանակահատվածներում կանխատեսվող խնդիրներից ելնելով՝ շինարարության ավարտը նախատեսվում է 2027 թվականի տարեվերջին:

3.2.10 Խորքային հորերի վերականգնում

2023 թվականին իրականացվելիք աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը ձեռք են բերվել 2018 թվականին, այդ պատճառով Կոմիտեն նախաձեռնել է վերը նշված փաստաթղթերի վերահաշվարկի և փորձաքննության ձեռքբերման աշխատանքներ, որով պայմանավորված՝ կփոխվեն նաև շինարարական աշխատանքների համար պահանջվող գումարները և կներկայացվեն լրացուցիչ:

Հաշվի առնելով, որ 8 խորքային հորերի և ջրօգտագործման թույլտվությունների պայմանների ճշգրտման խնդիր է առաջացել, Ջրային կոմիտեն նախատեսում է 2023թ. ընթացքում իրականացնել այն խորքային հորերի շինարարությունը, որոնք ՋՕԸ-երի համար խիստ առաջնային են և մրցութային փաթեթի համար տեխնիկական խնդիրներ չունեն:

2024թ. համար այս միջոցառման համար ֆինասական միջոցներ նախատեսելու վերաբերյալ առաջարկություններ չկան:

3.2.11 Գետերի և հեղեղատարների տեղամասերի ամրացման և մաքրման աշխատանքներ

ՀՀ կառավարության 23.02.2017թ. N 183-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով նախատեսված գետերի ջրերի վնասակար ներգործության կանխման և վերացման միջոցառումների կազմակերպման ու իրականացման պետական կառավարման լիազոր մարմին է ճանաչվել Ջրային կոմիտեն:

Ողողման համակարգերում առաջացած հրատապ և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից է հակահեղեղային միջոցառումներ իրականացումը: Հանրապետության տարածքի կեսից ավելին ենթակա է սելավային երևույթների ազդեցությանը, որոնք յուրաքանչյուր տարի ունենում են տարբեր ուժգնություն: Վերջիններս պարբերաբար զգալի վնաս են հասցնում հանրապետության տնտեսության տարբեր ճյուղերին և նույնիսկ պատճառ են դառնում բնակավայրերի ավերման:

Հեղեղների հետևանքների վերացումը, պահանջում է առավել մեծ կապիտալ ներդրումներ, քան դրանց ծնող պատճառների վերացումը և արդյունքում, անբարենպաստ հետևանքների կանխումը: Հետևաբար, առաջնահերթ անհրաժեշտ է հակահեղեղային կանխարգելիչ միջոցառումների իրականացումը, որոնցից առանցքային է համարվում հանրապետության բնակավայրերի, տնտեսական արժեք ներկայացնող տարածքների և բնակչության գույքը վարարումներից, սելավներից պաշտպանելու տվյալների բազայի ստեղծումը, կառավարման համակարգչային ծրագրի մշակումը: Հեղեղաջրերը, դուրս գալով հուներից կամ փոխելով բնական հունը, ջրածածկում են առափնյա գյուղատնտեսական և այլ նշանակության հողատարածքները: Բացի այդ, հեղեղները մեծ չափի վնասներ են հասցնում առափնյա շենք-շինություններին, ինժեներական կառուցվածքներին, այդ թվում՝ կամուրջներին, ճանապարհներին, ողողման և չորացման ցանցերին, պոմպակայաններին, գազամուղներին, ջրմուղ-կոյուղու ցանցերին: Միաժամանակ տեղի են ունենում խոշոր չափերի հասնող հողատարման երևույթներ: Ընդհանուր առմամբ սակավահող Հայաստանի համար հիշատակված երևույթը չարիք է հանդիսանում:

Հակահեղեղային միջոցառումներն անհրաժեշտ է իրականացնել յուրաքանչյուր տարի՝ ընտրելով գետերի և սելավատարների առավել վտանգավոր հատվածները:

«Գետերի և հեղեղատարների տեղամասերի ամրացման և մաքրման աշխատանքներ» միջոցառման շրջանակներում 2024-2026 թվականների ընթացքում մոտարկված կպահանջվի 2-ական նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման և շինարարության համար յուրաքանչյուր տարի 500,000.0 հազ դրամ՝ 2023 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների և արտակարգ իրավիճակների լիազոր մարմնի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա առաջնահերթություն ստացած աշխատանքների իրականացման համար:

3.2.12 Փոքր և միջին ջրամբարների նախագծում և կառուցում

ՀՀ տարածքում առաջացող մակերևութային ջրերը արդյունավետ կառավարելու համար անհրաժեշտություն է առաջացել իրականացնել ջրամբարաշինության ծրագրեր:

Ջրամբարների կառուցմամբ նախատեսվում է բարելավել ոռոգելի հողատարածքների ջրամատակարարումը, ավելացնել նոր հողատարածքներ, մեխանիկական ջրարտադրության ինքնահոսով փոխարինելու արդյունքում համակարգի համար ապահովել էլեկտրաէներգիայի խնայողություն:

Ջրամբարաշինության միջոցով հնարավորություն կստեղծվի ապահովելու ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակը: Միաժամանակ՝ նշված խնդրի լուծումն անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի ջրային համակարգերի օգտագործման արդյունավետության բարձրացման և կայուն զարգացման համար:

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 700.0 մլն դրամ՝ 15 փոքր և միջին ջրամաբներից թվով 4-ի՝ Արգիճիի, Աստղաձորի, Քասախի, Ելփինի նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար:

Ջրամբարներից 2-ի՝ Լիճքի և Արթիկի մասով կան նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար մեկնարկել են կրկնակի մրցութային գործընթացները, և առաջիկայում կշրջանառվի որոշման նախագիծ՝ ֆինանսական միջոցներ հատկացնելու համար: Հաշվի առնելով նշվածը և մյուս ջրամբարների տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունների ծառայությունների ձեռքբերման նախապատրաստական աշխատանքները՝ 2024 թվականի ընթացքում սույն ծրագրի համար մոտարկված կպահանջվի **4,500,000.0** հազ դրամ՝ 9 ջրամբարի տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրության/նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման և 3 ջրամբարի շինարարության գործընթացի համար:

2025 թվականի ընթացքում մոտարկված կպահանջվի **8,500,000.0** հազ դրամ 6 ջրամբարի շինարարության գործընթացի համար:

2026 թվականի համար մոտարկված կպահանջվի **8,000,000.0** հազ դրամ՝ 6 ջրամբարի շինարարության գործընթացի համար:

3.2.13 Ջրամբարների վերականգնման և վերազինման աշխատանքներ

ՀՀ տարածքում առաջացող մակերևութային ջրերի արդյունավետ կառավարման և ջրի պահանջարկի բավարարման համար «Ջրամբարների վերականգնման և վերազինման» միջոցառման շրջանակներում ՀՀ 2023 թվականին նախատեսվում է իրականացնել ՀՀ Լոռու մարզի Մեծավանի ջրամբարի (103,327,0 հազար դրամ) և Ապարանի ջրամբարի (91,277,0 հազար դրամ) վերանորոգման աշխատանքները, ինչպես նաև լրամշակել առկա նախագծանախահաշվային փաստաթղթերը:

«Ջրամբարների վերականգնման և վերազինման» միջոցառման շրջանակներում ջրամբարների անվտանգ շահագործման և դրանցով կայուն ջրամատակարարման

ապահովման նպատակով 2024-2026 թվականների ընթացքում մոտարկված կպահանջվի յուրաքանչյուր տարվա համար **1,000,000.0** հազար դրամ՝ 2023 թվականին և հաջորդ տարիների ընթացքում առաջնահերթություն ստացած աշխատանքների իրականացման համար:

3.2.14 Ոռոգման համակարգերի կառուցում

«Բուսաբանական այգու ոռոգման ցանցի կառուցում՝ Սարկավագի փողոցի ջրանցքից մինչև Բուսաբանական այգու պարսպի հատված» օբյեկտի շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2023 թվականին:

3.2.15 Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարում

2023 թվականի հունվարի 1-ից Հիդրոհանգույցի ջրային համակարգի անխափան սպասարկումը, շահագործումն ու պահպանումը նոր կառավարչի միջոցով իրականացնելու նպատակով 2022թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով Ջրային կոմիտեի կողմից ձեռք են բերվել Հիդրոհանգույցի ջրային համակարգի վերգետնյա կառույցների տեխնիկական վիճակի գնահատական-հաշվետվություն, բացատրագրեր, Հիդրոհանգույցի ջրային համակարգի ստորգետնյա կառույցների/թունելների/ տեխնիկական վիճակի գնահատական-հաշվետվություն, Հիդրոհանգույցի ջրային համակարգի շահագործման կանոններ, Հիդրոհանգույցի ջրային համակարգի շահագործման և պահպանման համար անհրաժեշտ շահագործող անձնակազմի, տեխնիկական միջոցների՝ մեքենա-մեխանիզմների, սարքեր-սարքավորումների ցանկեր, Հիդրոհանգույցի ջրային համակարգի շահագործման և պահպանման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափ՝ տարեկան և ամսական կտրվածքներով, Հիդրոհանգույցի ջրային համակարգի անխափան շահագործման և պահպանման համար անհրաժեշտ լրացուցիչ այլ փաստաթղթեր և միջոցառումների մասին առաջարկություններ: Համաձայն արդյունքների՝ Հիդրոհանգույցի ջրային համակարգի շահագործման և պահպանման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ամսական չափը գնահատվել է **35,139.2** հազար դրամ:

ՀՀ 2024-2026թթ. համար հայտով առաջարկվում է յուրաքանչյուր տարվա համար նախատեսել՝ **421,670.4** հազար դրամ:

3.2.16 Արփա-Սևան ջրային համակարգի տեխնիկական վիճակի բարելավում

Արփա-Սևան ջրատարը բաղկացած է երկու թունելներից: Կեչուտի ջրամբարից N 1 թունելով Արփա գետի ջուրը տեղափոխվում է Եղեգիսի ջրանցույց և այնտեղից Եղեգիս գետի հոսքի հետ միասին ուղղորդվում է N 2 թունել, որով ջուրը տեղափոխվում է Սևանա լիճ:

Նախատեսված էր թունելով տեղափոխել տարեկան 300 մլն/մ3 ջուր, սակայն «Արփա-Սևան» թունելի տեխնիկական վիճակով պայմանավորված՝ Արփա-Սևան թունելով Սևանա լիճ է տեղափոխվել՝ 2019 թվականին՝ 160.0 մլն խոր.մ, 2020 թվականին՝ 205,2 մլն խոր.մ, 2021 թվականին՝ շուրջ 157,5 մլն խոր.մ ջուր իսկ 2022 թվականին՝ 168.6 մլն խոր.մ ջուր :

Արփա-Սևան N 2 թունելի առավել վթարավտանգ հատվածների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման նպատակով Ջրային կոմիտեի կողմից կնքված համապատասխան պայմանագրով նախատեսվում է այն ձեռք բերել 2023 թվականի 1-ին կիսամյակում

2024-2026 թվականների ընթացքում մոտարկված հաշվարկներով յուրաքանչյուր տարվա համար կպահանջվի **2,000,000.0** հազ դրամ՝ առավել վթարավտանգ հատվածների հիմնանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

3.2.17 Կոլեկտորադրենաժային ծառայություններ

Ծրագրի նպատակն է բարելավել ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակը, պահպանել գրունտային ջրերի մակարդակը թույլատրելի խորություններում, կանխարգելել հողատեսքերի երկրորդային աղակալումմն ու ալկալիացումը, կանխարգելել տարափոխիկ հիվանդոյթունների տարածումը և նպաստել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը:

Հանրապետության թվով 7՝ Արարատի, Արմավիրի, Շիրակի, Լոռու, Կոտայքի, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզերում տեղակայված 1,065.7 կմ ընդհանուր երկարությամբ բաց դրենաժային ցանցից տարեկան մաքրվել է 140.8-535.7 կմ, միջինը՝ 309.2 կմ, այսինքն՝ դրենաժային ցանցերի յուրաքանչյուր բաղադրիչ մաքրվել էր 3-4 տարին մեկ անգամ, միջին տարեկանը՝ 338.25 կմ: Կատարված աշխատանքների շնորհիվ գերխոնավ հողերի տարածքները նվազեցին շուրջ 12.5 հազար հա-ով, ջրակալված բնակավայրերի քանակը 45-ով, 2006թ.-ից մալարիա հիվանդությունը վերացվեց, և զգալիորեն բարձրացավ գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը դրենաժի տակ ընկած տարածքներում:

Ստորև բերվում է ոլորտի 2017-2022թթ. ՀՀ պետական բյուջեից կատարված ներդրումները և արդյունքները՝

հազ.դրամ

Տարի	Ֆինանսավորվել է պետական բյուջեից	ՀՀ պետական բյուջեով նախատեսված	Մաքրված կոլեկտորադրենաժային ցանցի ընդհանուր երկարություն, կմ	Ջրակալված բնակավայրերի քանակը	ՀՀ գերխոնավ հողերի մակերեսները, հա
2017	320,473.6	320,473.6	189,091	30	12 011,0
2018	336,497.3	336,497.3	191,108	30	12 358,0
2019	336,497.3	336,497.3	192,520	28	12 342,0
2020	291,315.9	336,497.3	181,044	28	11 246,0
2021	320,597.4	336,497.3	217,976	27	9 310,0

2022	290,823,9	290,823,9	197,932	25	8 446,0

Ընկերությունն իրականացնում է՝

ա/ Գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ

Ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման նպատակով միջոցառումների մշակման համար նախատեսվում է իրականացնել.

- գրունտային ջրերի մակարդակների ստացիոնար, տասնօրյա, միաժամանակ դիտումներ Արարատյան հարթավայրի 450 դիտողական հորատանցքերում,
- ջրի քիմիական անալիզ և մշակում - 1200 անալիզ/մշակում,
- դիտման հորատանցքերի վերականգնման նպատակով շնեկով հորատում - 500 գծմ,
- դիտման հորատանցքերի ամրակապում և ֆիլտրի տեղադրում – 500 գծմ,
- դիտման հորատանցքերի մաքրման նպատակով էռլիֆտով ջրի արտամղում - 250 ժամ,
- գրունտային ջրերի մակարդակների և գրունտային ջրերի հանքայնացման թվայնացված քարտեզների կազմում – 75 քարտեզ:

բ/ Կոլեկտորադրենաժային ցանցերի տեխնիկական վիճակի պահպանում և շահագործում

Նախատեսվում է իրականացնել հանրապետության բաց կոլեկտորադրենաժային ցանցի շահագործումը շուրջ 1065.703 կմ վրա, կատարել ընթացիկ և վթարային վերանորոգումներ, շահագործողական ջրաչափություն 40 հիդրոմետրական կետերում և կոլեկտորադրենաժային ցանցի տեխնիկական վիճակի հսկման աշխատանքներ 34.4 հազ.հա վրա:

գ/ ՀՀ կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման, նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն

2024թ. առաջարկվում է նախատեսել **298 094,5** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ 20%: Ընդ որում, ՀՀ կոլեկտորադրենաժային ցանցերի շուրջ 223 կմ ընդհանուր երկարությամբ հատվածի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների համար, հաշվի առնելով, հիմնական աշխատանքներից՝ ամենամյա մշտադիտարկումների վրա ծախսվող շուրջ 47-50մլն դրամի անհրաժեշտությունը, ապա ՀՀ կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների համար մնում է շուրջ 248 մլն դրամ, որը ՀՀ Ֆինանսների նախարարությամն կողմից հրատարակվող 1984թ. շինարարության գների նկատմամաբ կիրառվող գործակիցների, հաշվարկված նախահաշվով գումարը կբավականացնի շուրջ 173 կմ ընդհանուր

երկարությամբ հատվածի մաքրման և ընթացիկ նորագման համար: Մնացյալ 50 կմ երկարությամբ դրենաժի մաքրման համար շուրջ 70 մլն դրամով իր ներդրումը կունենա «Մելիորացիա» ՓԲԸ-ն, որը կօգտագործի ՀՀ Կառավարության 22.07.2021թ N1201-Ն որոշման համաձայն՝ ՀՀ կոլեկտորադրենաժային ցանցերի մեջ իրենց տնտեսությունների հետադարձ ջրերը թափելու համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից պայմանագրային հիմունքներով, պետվճարների գանձումներից ստացված գումարները և կմարի պարտավորությունները տնտեսվարողների առջև՝ դրենաժների մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման առումով: 2024թ. նախատեսվել է իրականացնել կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանման և շահագործման աշխատանքներ, որի համար պահանջվում է 363 496,900 հազար դրամ, այդ թվում՝ ԱԱՀ-ի մասով 60 582,800 հազար դրամ:

3.2.18 Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների սուբսիդավորում

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի միջոցներից «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությանը տրամադրվել է սուբսիդիա՝ յուրաքանչյուր խորանարդ մետրի համար՝ գումարային 208.419 դրամ (ԱԱՀ-ով) սակագնից՝ 7.949 դրամի (ԱԱՀ-ով) չափով, ընդ որում՝ ջրամատակարարման ծառայության համար 177.156 դրամ (ԱԱՀ-ով) սակագնից՝ 6.756 դրամի (ԱԱՀ-ով) չափով և ջրահեռացման ծառայության համար՝ 31.263 դրամ (ԱԱՀ-ով) սակագնից՝ 1.193 դրամի (ԱԱՀ-ով) չափով:

Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով հատկացվել է 1.1 մլրդ դրամ սուբսիդիա 2023 թվականի հունվարի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում մատուցվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) մանրածախ ծառայությունների դիմաց, իսկ 2023 թվականի դեկտեմբեր ամսվա համար նախատեսված փոխհատուցման գումարները և ճշտված գումարները պետք է ներառվեն ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի նախագծում:Հաշվի առնելով, որ 1.1 մլրդ դրամը նախատեսված է 2023թվականի 11 ամիսների համար, ուստի մեկ ամսվա համար սուբսիդիայի նախնական չափը կկազմի 100,000.0 հազար դրամ:

3.2.19 Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում

Այս միջոցառման շրջանակներում 2024 թվականի համար ներկա պահին առաջարկություններ չկան:

3.2.20 ՀՀ տարածքում վարձակալի կողմից չսպասարկվող համայնքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցում

2024 թվականի համար ներկա պահին առաջարկություններ չկան:

3.2.21 Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգում

ՀՀ կառավարություն 21 հուլիսի 2022 թվականի n 1134-ն որոշման համաձայն 2022թ. սեպտեմբերին մեկնարկել է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող և հրատապ լուծում պահանջող համայնքների ջրամատակարարման համակարգերի վերակառուցման ծրագրի շրջանակներում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 2021 և 2022 թվականների ընթացքում կազմակերպված շինարարական աշխատանքների ու ծառայությունների կնքված պայմանագրերի և կազմակերպված գնման գործընթացների շինարարական աշխատանքները: Որպես պատվիրատու գնման պայմանագրերը, ինչպես նաև դրանցով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ դնելու մասին համաձայնագրերը կնքել է ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեն, իսկ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը հանդիսանում պատասխանատու ստորաբաժանում:

Ծրագրի ընթացիկ փուլով նախատեսված է 26 համայնքներից 2022թ-ի սեպտեմբերին շինարարական աշխատանքները մեկնարկել էր 21 համայնքներում, իսկ մնացած 5 պայմանագրերի համար Կապալառուի հետ համաձայնագրեր չի կնքվել և նոր գնման մրցույթների արդյունքում նոր 4 Կապալառուների հետ 11.01.2023թ-ին կնքվել են կապալի պայմանագրեր:

Հրատապ ծրագրերի ընդհանուր կապիտալ ներդրումը կազմել է 6,529,768 հազար ՀՀ դրամ: 2022 թվականին ծախսվել է 1,576,992.8 հազար դրամ, ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով հատկացվել է 3,246,754.6 հազար դրամ, իսկ 2024 թվականին առաջարկվում է նախատեսել **1,429,123.2** հազար դրամ:

3.3. Նոր նախաձեռնությունները

3.3.1 Տեխնիկական, տնտեսական, կազմակերպական, ֆինանսական և իրավական բնույթի փոխկապակցված համալիր միջոցառումների իրականացման նպատակով էլեկտրոնային հարթակի ներդրում

Ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքներում մինչև 2022թ. տեղադրվել է շուրջ 1600, ինչպես նաև 2023թ-ի համար նախատեսված է տեղադրել ևս 748 հատ SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումներ, որոնք ապահովելու են ջրանցքների ջրբաժան հանգույցներում և ջրաչափական դիտակետերում ոռոգման ջրի հաշվառումը և ստացված տվյալների կառավարման կենտրոն առցանց փոխանցումը: Փոխանցված տվյալները առցանց ընդունելու և կենտրոնացված կառավարում իրականացնելու նպատակով ակնկալվում է ստեղծել էլեկտրոնային կառավարման համակարգ՝ (հարթակ) հագեցված համապատասխան տեխնիկական միջոցներով և համապատասխան մասնագիտացում ունեցող կադրային ռեսուրսներով: Միասնական էլեկտրոնային հարթակի ներդրումը հնարավորություն կտա իրականացնել ոռոգման ջրի ծավալների օպերատիվ՝ առցանց հաշվառում, կորուստների գնահատում, մոնիթորինգի ավտոմատացված համակարգի և տվյալների բազայի ստեղծում, ինչպես նաև առաջացած խնդիրներին օպերատիվ արձագանքում:

Միաժամանակ նախատեսվում է ապահովել միասնական էլեկտրոնային հարթակի, ջրի կառավարման ծրագրի և GIS համակարգի համատեղ աշխատանքը, որը հնարավորություն կընձեռնի իրականացնել ստացված տվյալների միասնական վերլուծություն: Նախնական գնահատականներով առաջարկվում է 2024թ. նախատեսել **120,000.0** հազար դրամ:

3.3.2 Ոռոգման համակարգերի չափագրում և վկայականների ձեռքբերում

Համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին գույք ամրացնելու, անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու և նվիրաբերելու, ինչպես նաև «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին» N 1689-Ա որոշման՝ Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից «Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի», «Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի՝ լրացուցիչ ֆինանսավորում ծրագրի», «Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի» և «Վեդի ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագրի» (այսուհետ՝ ծրագրեր) իրականացման արդյունքում կառուցված և վերականգնված հիդրոտեխնիկական կառուցվածքների սեփականության իրավունքի գրանցման վկայականների ձեռք բերման համար անհրաժեշտ է իրականացնել չափագրում (մեկ միավոր գույքի համար 96 000 դրամ):

1. Չափագրում (յուրաքանչյուր միավորի համար միջինը 40.000 ՀՀ դրամ

2. Իրավունքի պետական գրանցում (յուրաքանչյուր միավորի համար միջինը 25.000 ՀՀ դրամ):

3. Նոտարական վավերացում (յուրաքանչյուր միավորի համար միջինը 20.000 ՀՀ դրամ):

Միաժամանակ ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի 1689-Ա որոշման կետի ապահովման նպատակով անհրաժեշտ է

Թվով 49 հատ պոմպային ագրեգատների, գլխամասային հանգույցների և այլ ջրային համակարգերի չափագրման համար անհրաժեշտ է 1960,0 հազար դրամ:

Շուրջ 282,4 կմ ընդհանուր երկարության ջրային համակարգերի չափագրման և վկայականների ձեռքբերման նպատակով անհրաժեշտ է 11296,0 հազար դրամ գումար:

2024թ. նախատեսվում է **13,256.0** հազար դրամ:

3.3.3 Խմելու ջրի ոլորտում ջրային համակարգերի չափագրում, քարտեզագրում և վկայականների ձեռքբերում

2016 թվականի նոյեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև

կնքված «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի շրջանակներում Ջրային կոմիտեն պարտավորվել էր Վարձակալին փոխանցել նախորդ 5 ջրամատակարար ընկերությունների տիրապետման տակ մեկնարկային օրվա դրությամբ գտնվող ամբողջ գույքը: Մինչդեռ Վարձակալության պայմանագրի իրականացման 6 տարիների ընթացքում (2017-2022թթ.) ընթացքում կնքված համաձայնագրերով վարձակալության է փոխանցվել սեփականության իրավունքի գրանցման վկայականներ ունեցող անշարժ գույքի միայն մի մասը: Սակայն դեռևս առկա են մեծ քանակի անշարժ գույք /որը պետք է փոխանցվեր Վարձակալության պայմանագրի մեկնարկին/, որն այսօր փոխանցված չէ Վարձակալին: Վարձատուի կողմից Վարձակալին հանձնված չեն նաև վարձակալված ջրային համակարգերի (ջրագծերի, կողուղագծերի) սեփականության վկայականները, որոնք ևս պետք է ստանան պետական գրանցում (շուրջ 540 սեփականության իրավունքի գրանցման վկայականներ ձեռքբերում): Նշված աշխատանքները չեն իրականացվել ֆինանսական միջոցների սղության պատճառով:

Փաստորեն շուրջ 540 վկայականների գրանցման համար անհրաժեշտ է **24,300.0** հազար դրամ (540*25,0+540*20,0 = 24300,0 հազար դրամ)

3.3.4 Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցում

<u>ՀՀ Սյունիքի մարզի Բռնակոթ համայնքի այլընտրանքային աղբյուրից ջրատարի կառուցման և վերակառուցման աշխատանքներ</u>

«Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող համայնքներ ջրամատակարարման համակարգերի վերակառուցման ծրագրի շրջանակներում առաջարկվում է ներառել ՀՀ Սյունիքի մարզի Բռնակոթ համայնքի այլընտրանքային աղբյուրից ջրատարի կառուցման աշխատանքները:

ՀՀ Սյունիքի մարզի Բռնակոթ բնակավայրին մատակարարվող ջրի հիմնական ծավալն ապահովում է «Յոթնաղբյուր» կապտաժը, որը գտնվում է Հայաստան-Նախիջևան սահմանին բավականին մոտ, ինչն էլ անհնարին և վտանգավոր է դարձնում սպասարկման նպատակով ընկերության աշխատակիցների մուտքը դեպի կապտաժի տարածք:

Անվտանգության սպառնալիքներից, ինչպես նաև ջրագծի հետագա անխափան շահագործման նպատակահարմարությունից ելնելով՝ Բռնակոթ բնակավայրի թվով 478 բաժանորդների ջրամատակարարումը «Մուխութուրյան» կապտաժներից սնվող մայրուղային ջրատարից իրականացնելու համար անհրաժեշտ է կառուցել 6-8 կմ երկարությամբ այլընտրանքային ջրագիծ, որի կառուցման աշխատանքները պետք է իրականացվեն բարձր լեռնային, ինչպես նաև՝ սահմանամերձ գոտում:

Մոտավոր նախնական գնահատմամբ ջրատարի կառուցումը կարժենա շուրջ 250-260 մլն դրամ: Միաժամանակ, նախագծանախահաշվային փաստաթղթերի արժեքը կկազմի շուրջ 15,0 մլն դրամ, որը նախատեսվում է իրականացնել շուրջ 3 ամսում:

Հաշվի առնելով խնդրի հրատապությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներն նախատեսվում է իրականացնել 2023 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին, նախատեսվում է շինարարական աշխատանքները իրականացնել 2024 թվականի ընթացքում, որի համար կպահանջվի շուրջ **260,0** մլն դրամ:

Նոր Խարբերդ և հարակից թաղամասերի ջրամատակարարման բաշխիչ ցանցերի վերակառուցման և անհատական տնային միացումների փոխարինում

Նոր Խարբերդ և հարակից թաղամասերի ջրամատակարարման բաշխիչ ցանցերի վերակառուցման և անհատական տնային միացումների փոխարինման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինասնական միջոցները, ըստ նախագծանախահաշվային արժեքի, կազմում է 1,253 մլն դրամ:

Ջրային կոմիտեում շահագրգիռ կողմերի և Երևանի քաղաքապետարանի պատասխանատուների մասնակցությամբ կայացած աշխատանքային քննարկումների արդյունքում կարևորվել է վարկային միջոցներից առաջացած տնտեսումների հաշվին նախագծանախահաշվային փաստաթղթերի 7-րդ փաթեթով նախատեսված վերոհիշյալ աշխատանքներն ամբողջությամբ իրականացնելու անհրաժեշտությունը, սակայն մնացորդային գումարի շուրջ 400 մլն դրամի չափով հնարավոր է իրականացնել մասնակի կառուցապատում, որի հետևանքով նոր կառուցված ջրագծերի հատվածներում կմնան նաև հին «թաքնված» ջրագծեր, և բաշխիչ ցանցի պատշաճ շահագործումը գործնականում կլինի գրեթե անհնարին ու անարդյունավետ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ֆինանսավորման արդյունքում ձեռք են բերվել ՆՆՓ փաստաթղթերը: Փաստորեն 1,253 մլն դրամ արժեք ունեցող ծրագրից շուրջ 400.0 մլն դրամն իրականացվում է <Երևանի ջրամատակարարման բարելավում> ծրագրի շրջանակներում, իսկ տարբերության՝ 853,0 մլն դրամի տարբերության չափով առաջարկվում է համալրել <Երևանի ջրամատակարարման բարելավում> ծրագրի ֆինանսական միջոցները, համալրման և Ծրագրի ամբողջականությունն ապահովելու նպատակով: ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի նախագծի առաջարկվում **853 000,0** հազար դրամ:

3.3.5 Հատուկ նշանակության օբյեկտների պահպանություն

2021 թվականին «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունն առաջարկել է իր կողմից ֆինանսավորվող կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանության հարցը տեղափոխել ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորման դաշտ, որի արդյունքում ազատված ֆինանսական միջոցները (տարեկան շուրջ 400.0 մլն դրամ) կուղղվեն կարևորագույն օբյեկտների պահպանության հիմնախնդիրների լուծմանը, տեխնիկական վերազինմանը և կապիտալ ներդրումների իրականացմանը:

Անհրաժեշտ է նշել, որ տարբեր տեսչական մարմինների, մասնավորապես՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական, ՀՀ բնապահպանության և ընդերքի

տեսչական, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինների կողմից «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ում (այսուհետ՝ Ընկերություն) պարբերաբար իրականացվում են ստուգումներ, հարուցվում վարույթներ և արդյունքում կայացվում Ընկերության գլխավոր տնօրենին վարչական տույժ նշանակելու մասին որոշումներ:

2019-2022 թվականների ընթացքում վերը նշված մարմինների կողմից հարուցվել է շուրջ 44 վարույթ, որոնց մի մասը կարճվել է, իսկ մյուս դեպքերում վարչական տույժ է նշանակվել Ընկերության գլխավոր տնօրենի նկատմամբ:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից արձանագրված խախտումները վերաբերում են դեռևս 2016 թվականի նոյեմբերի 21-ին Վարձակալության պայմանագրի կնքման պահին վարձակալությամբ հանձնվող գույքը սանիտարական կանոններին ու նորմերին չհամապատասխանելու հանգամանքը: Տեսչական մարմինները պարտավորեցնում են Ընկերությանը դրանք համապատասխանեցնել սանիտարական կանոններին ու նորմերին՝ առանց դրանց համար իրատեսական ժամկետներ սահմանելու և հաշվի չառնելով բազմաթիվ այլ օբյեկտիվ պատճառներ ու հանգամանքներ:

Վարձակալության փոխանցված ջրային համակարգերի սանիտարական պահպանման և անօտարելի գոտիներում ՀՀ օրենսդրության խախտումներով կառուցված շենքերի, շինությունների նաև այլ ապօրինի գործողությունների դեմ պայքարելու և Կողմերի միջև պատասխանատվության հստակեցման անհրաժեշտությունից ելնելով՝ Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի միջև 2019 թվականի ապրիլի 23-ին կնքվել է Վարձակալության պայմանագրի մաս կազմող N 9 համաձայնագիրը, համաձայն որի Վարձակալը պատասխանատվություն չի կրում փոխանցված ջրային համակարգերի սանիտարական պահպանման և անօտարելի գոտիներում ՀՀ օրենսդրության խախտումներով կառուցված շենքերին ու շինություններին, ինչպես նաև այլ ապօրինի գործողությունների հետևանքով ջրային համակարգերի հնարավոր վթարների դեպքում սպառնացող վտանգների, ծանր հետևանքների և պատճառված վնասների համար:

Դեռևս 2021 թվականին, Ընկերությունն առաջարկել է իր կողմից ֆինանսավորվող կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանության հարցը տեղափոխել ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորման դաշտ, որի արդյունքում ազատված ֆինանսական միջոցները (տարեկան շուրջ 400.0 մլն դրամ) կուղղվեն կարևորագույն օբյեկտների պահպանության հիմնախնդիրների լուծմանը, տեխնիկական վերազինմանը և կապիտալ ներդրումների իրականացմանը:

Առաջարկը ներառվել է Վարձակալության պայմանագրի մաս կազմող 2021 թվականի նոյեմբերի 10-ին կնքված N 24 համաձայնագրի 2-րդ կետում:

2023 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագիծը քննարկելիս հարցի առնչությամբ Ջրային կոմիտեն, որպես առաջարկություն, բյուջետային հայտում ներառել է նաև Ընկերության կողմից ներկայացված առաջարկությունը՝ նախատեսելով, որ այդ ազատված միջոցները յուրաքանչյուր տարի կներառվեն կարևորագույն ջրային համակարգերի վերականգնման և արդիականացման ծրագրի իրագործման

նպատակով: ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի 1531-Ա որոշմամբ ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել 2023 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագիծը, որում ներառված չէ Ջրային կոմիտեի կողմից լրացուցիչ բյուջետային հայտով ներկայացված «Հատուկ նշանակության օբյեկտների պահպանություն» միջոցառումը:

2022 թվականի սեպտեմբերի 12-ին ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի մոտ կայացած ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2023 թվականի պետական բյուջեի հայտով առկա խնդիրների մասին խորհրդակցության արձանագրության 1-ին կետի 2-րդ ենթակետով՝ նախատեսվել է «Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում» ծրագրի «Հատուկ նշանակության օբյեկտների պահպանություն» միջոցառման գծով ներկայացնել լրացուցիչ հաշվարկ-հիմնավորումներ: Ընկերությունը ներկայացրել է իր հաշվարկները և հիմնավորումները, և Ջրային կոմիտեն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացրել N24 համաձայնագրի Հավելված 1-ը և ՀՀ ոստիկանության ՊՊԳ վարչության և Ընկերության միջև 2017 թվականի հունվարի 19-ին կնքված պայմանագիրը:

Դեռևս 2017 թվականին, Ընկերությունը 15 տարիների համար ներկայացրել է սակագնային պլան, որտեղ սանիտարական կանոնների և նորմերի համապատասխանեցման աշխատանքների համար գումար նախատեսված չի եղել, իսկ ներկայումս այն նախատեսելու դեպքում իր ազդեցությունը կունենա սակագնի բարձրացման վրա:

Ծրագրի իրականացման արդյունքներով 2031 թվական, ազատված միջոցները կուղղվեն «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝ բացառապես կարևորագույն նշանակության օբյեկտների վերազինման, վերակառուցման և վերանորոգման համար: Գույքը կօգտագործվի իր նպատակային նշանակությանը համապատասխան, պատշաճ մակարդակով կկազմակերպվի դրանց շահագործումն ու պահպանումը, ինչպես նաև կբարելավվի խմելու ջրի ջրամատակարարման ծառայությունների մակարդակը: Ծրագրի իրականացման արդյունքում ձևավորված գույքը սահմանված կարգով հանդիսանալու է պետական սեփականություն, որն ամրացվելու է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության ջրային կոմիտեին՝ հետագայում վարձակալության հանձնելու նպատակով:

2024 թվականի բյուջետային հայտում առաջարկվում է ներառել Ընկերության կողմից ներկայացված առաջարկությունը՝ նախատեսելով, որ այդ ազատված միջոցները, որոնք կազմում են տարեկան 400.0 մլն դրամ, յուրաքանչյուր տարի կօգտագործվեն կարևորագույն ջրային համակարգերի վերականգնման և արդիականացման ծրագրի իրագործման նպատակով:

ՀՀ 2024-2026թթ.ՄԺԾԾ հայտով առաջարկվում է 400,000.0 հազար դրամ՝ յուրաքնչյուր տարվա համար:

4. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ 2024-2026թթ. ժամանակահատվածում Ջրային կոմիտեի կողմից իրականացվող ծրագրերն ու միջոցառումներն ունեն կամ հանրապետության ողջ տարածքով կամ մասնակի բաշխվածություն, մասնավորապես, «Ջրամատակարարաման և ջրահեռացման բարելավում» ծրագրի «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների սուբսիդավորում» միջոցառմամբ հատկացված ֆինանսական միջոցները նպատակ ունեն մեղմել ՀՀ բնակչության կողմից «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին վճարվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների սակագները՝ ՀՀ կառավարության կողմից սուբսիդավորման իրականացմամբ:

5. ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ (ԽԱՉՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Միջոլորտային բնույթի քաղաքականություններին են առնչվում «Ոռոգման ոլորտի առողջացում» ծրագրի «Օրվա կարգավորման ջրավազանների կառուցում և վերակառուցում» և «Փոքր և միջին ջրամբարների կառուցում» միջոցառումները:

6. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌՈՂՋԱՑՈՒՄ

1-2 «Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագիր»

11005- Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի խորհրդատվություն և կառավարում

31005- Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում

«Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրով» նախատեսվում է մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոս համակարգերով, որոշ մայր ջրանցքների և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում, ՋՕԸ-ների ներտնտեսային ոռոգման ցանցերի արդիականացում, և ինստիտուցիոնալ զարգացում: Ծրագրի շրջանակներում առաջացած խնայողությունների հաշվին մեկնարկել են ոռոգման համակարգերի վերականգնման/կառուցման լրացուցիչ աշխատանքներ, որոնք իրականացվելու են Հայաստանի Հանրապետության գրեթե ողջ տարածքում (բացառությամբ Տավուշի մարզի) գտնվող երկրորդ կարգի 27 ջրանցքներում (65.8 կմ) և ներտնտեսային ոռոգման 3 համակարգերում (16.1 կմ)՝ շուրջ 5,649.7 մլն ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, այդ թվում՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում՝ 200.78 մլն ՀՀ դրամ, հեղինակային հսկողություն՝ 20.72 մլն ՀՀ դրամ, տեխնիկական հսկողություն՝ 220.0 մլն ՀՀ դրամ շինարարական աշխատանքներ՝ 5,208.2 մլն ՀՀ դրամ:

Ծրագրի ակնկալվող նորացված ցուցանիշներն են՝

- *Էլեկտրաէներգիայի տարեկան տնտեսում – 15.1 մլն կվտ/ժամ,*
- *Շահագործման ծախսերի կրճատում – ավելի քան 280 մլն դրամ/տարի,*
- *Ոռոգելի հողատարածքների աճ – մոտ 12.2 հազ. հա,*
- *Շահագործումից դուրս եկող պոմպակայանների քանակ – 8 հատ,*
- *Մայր և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնվող հատվածներ- 137.8 կմ,*
- *Ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնվող հատվածներ- 278.2 կմ,*
- *Շահառուների քանակ – 169,488 մարդ:*

Նախատեսված աշխատանքների իրականացումը նախատեսվում է շարունակել 2024-2025 թվականներին:

«***31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում»*** միջոցառում, որով նախատեսված են կապիտալ ծախսերը, համապատասխանաբար՝ 2024թ.-ին **1,843,744.6 հազ. դրամ** (4,659.0 հազ. ԱՄՆ դոլար) և 2025թ.-ին **259,288.8 հազ. դրամ** (655.2 հազ. ԱՄՆ դոլար) գումարներով՝ հաշվարկված **1 ԱՄՆ դոլար=395.74 ՀՀ դրամ** փոխարժեքով:

«***11005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի խորհրդատվություն և կառավարում»*** միջոցառում, որով նախատեսված են վճարելու խորհրդատվական ծառայությունների դիմաց անհրաժեշտ վճարումները, ինչպես նաև՝ պահպանման ծախսերն իրականացնելու համար, համապատասխանաբար՝ 2024թ.-ին **338,697.8 հազ. դրամ** (855.9 հազ. ԱՄՆ դոլար) և 2025թ.-ին **252,318.5 հազ. դրամ** (637.6 հազ. ԱՄՆ դոլար) գումարներով՝ հաշվարկված **1 ԱՄՆ դոլար=395.74 ՀՀ դրամ** փոխարժեքով:

3-4 «Վեդի ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագիր»

11006 Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման ծրագրի խորհրդատվություն և կառավարում

31001 - Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում

«Վեդի ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագրով» նախատեսվում է կառուցել ջրամբար Արարատի մարզում՝ Վեդի գետի աջափնյա գոտուց սելավատարի վրա: Ջրամբարը լցնելու համար ջրաղբյուր են հանդիսանում Վեդի և Խոսրով գետերը: Վեդիի ջրամբարը նախագծվել է 1991թ., Արարատյան

հարթավայրի 4,0 հազ հա հողակտորները ոռոգելու համար, որոնցից 2.8 հազ.հա՝ մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոս ոռոգման եղանակի: Վեդի ջրամբարի ընդհանուր ծավալը՝ 29 մլն մ^3, պատվարի ընդհանուր բարձրությունը՝ H=85 մ: Վեդի ջրամբարի 29 մլն մ^3 ընդհանուր ծավալով պատվարի, օժանդակ կառուցվածքների, մոտեցնող ջրանցքի, ճնշումային խողովակաշարի (Ոռոգման համակարգ), ոռոգման ցանցի և նոր տեխնոլոգիաների կիրառման, մանրամասն նախագծման, շինարարության և շին. տեխնիկական վերահսկողության ընդհանուր ներդրումային ծախսերը կազմում են 90.004 մլն Եվրո, այդ թվում վարկ՝ 75.000 մլն. Եվրո: Վեդիի 29 մլն մ^3 ընդհանուր ծավալով ջրամբարի կառուցումը կբարձրացնի Վեդու տարածաշրջանի շուրջ 3200 հա հողատարածքների ջրապահովման մակարդակը, իսկ ինքնահոս համակարգի անցնելու արդյունքում տարեկան կտնտեսվի շուրջ 19 մլն Կվտ/ժամ էլեկտրաէներգիա: Վեդու ջրամբարի կառուցման աշխատանքները կավարտվեն 2023 թվականին, միաժամանակ 2023 թվականին Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող փորձնական տարածքներում կմեկնարկեն ներտնտեսային ոռոգման ցանցի շինարարական աշխատանքները: Ծրագրի 2016թ. սկսված աշխատանքների ավարտը նախատեսվում է 2024 թվականին: Ծրագիրն իրականացվում է հետևյալ միջոցառումներով.

«***31001 - Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցում»*** միջոցառում**,** որով նախատեսված են կապիտալ ծախսերը 2024 թվականի համար կազմում է **956,497.5 հազ. դրամ** **(**2,219.5 հազ. Եվրո) գումար՝ հաշվարկված **1 Եվրո=430.96 ՀՀ դրամ** փոխարժեքով:

«***11006 Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման ծրագրի խորհրդատվություն և կառավարում»*** միջոցառում**,** որով նախատեսված են վճարելու մատուցվելիք աուդիտորական ծառայությունների դիմաց նախատեսվող վճարումները, ինչպես նաև՝ այլ ընթացիկ ծախսերն իրականացնելու համար **72,118.2 հազ. դրամ** **(**167.3 հազ. Եվրո) գումարով՝ հաշվարկված **1 Եվրո=430.96 ՀՀ դրամ** փոխարժեքով:

5-6 «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարում ծրագիր,

Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ, փուլ 1»

7-8 «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարում ծրագիր, Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ, փուլ 2»

9 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման դրամաշնորհային ծրագիր

11007 - Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարում ծրագրի խորհրդատվություն և կառավարում

31004 - Գերմանիայի զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում

11008 - Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարման ծրագրի երկրորդ փուլի խորհրդատվություն և կառավարում

31006 - Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում

«Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարում ծրագիր, Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ, փուլ 1» (այսուհետ՝ Փուլ 1) և **«Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարում ծրագիր, Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ, փուլ 2» (այսուհետ՝ Փուլ 2)** ծրագրերի շրջանակներում նախատեսվում է կառուցել Կապսի ջրամբարը՝ ընդհանուր 25 մլն մ^3 ծավալով, որի դեպքում պատվարի բարձրությունը կլինի H=31մ, ինչպես նաև նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ջրաչափական կետերի վերակառուցում և նոր/լրացուցիչ ջրաչափական կետերի կառուցում Ախուրյան գետի վերին հոսանքի երկայնքով: Կապսի 25 մլն մ^3 ծավալով ջրամբարի կառուցումը կբարձրացնի Շիրակի և Ախուրյանի Աջափնյա ջրանցքների իշխման տակ գտնվող հողատարածքների ջրապահովվածության մակարդակը: Կապսի 25 մլն մ^3 ծավալով ջրամբարի իշխման տակ տեղաբաշխված է «Շիրակ» ՋՕԸ–ի կողմից սպասարկվող (Շիրակի մայր ջրանցք) համայնքների շուրջ 12325 հա հողատարածքներ: Կանոնավոր և հուսալի ոռոգման արդյունքում կավելանան գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, ինչպես նաև ֆերմերները կսկսեն մշակել ավելի եկամտաբեր մշակաբույսեր:

Փուլ 1 ծրագրի շրջանակներում ընթացքի մեջ են նախագծահետազոտական և միջազգային փորձագետների հետազոտական ծառայությունների մատուցման գործընթացները, իսկ «Կապսի ջրամբարի և ինքնահոս համակարգի կառուցում» շինարարական աշխատանքների համար ընթացքի մեջ են մրցութային գործընթացները, մասնավորապես՝

«Կապսի ջրամբարի և ինքնահոս համակարգի կառուցում» աշխատանքային նախագծի նախահաշվային փաստաթղթերը 2021թ. ապրիլի 30-ին «ՀՀ Նախագծերի պետական արագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի կողմից տրվել է փորձագիտական դրական եզրակացություն:

«Կապսի ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցում» շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային փաթեթը՝ տեխնիկական և ֆինանսական առաջարկներ ստանալու նպատակով, 2021թ. նոյեմբերի 1-ին տրամադրվել է նախաորակավորում անցած 2 մասնակիցներին: 2022թ. հունվարի 24-ին առաջարկ ներկայացրել է միայն մեկ մասնակից՝ **61.5 մլն. Եվրո գնառաջարկով**, որն իր մեջ չի ներառում չնախատեսված ծախսերն ու ավելացված արժեքի հարկը: Այս գնառաջարկի պարագայում կնքվելիք պայմանագրի արժեքը կկազմի.

հազ. Եվրո

«Կապսի ջրամբարի և ինքնահոս համակարգի կառուցում» պայմանագիր			
	Ընդամենը	*Պայմանագրի գումարը առանց ԱԱՀ*	*ԱԱՀ*
Պայմանագրի գումար	**73,803.4**	61,502.8	12,300.6
Չնախատեսված գումար - պայմանագրի գումարի 12%	**8,856.4**	7,380.3	1,476.1
ԸՆԴԱՄԵՆԸ	**82,659.8**	68,883.1	13,776.6

Փուլ 1 (BMZ N° 2014 67 950) ծրագրի **50 մլն. Եվրո** վարկային միջոցներից շինարարության համար հասանելի է **41.9 մլն. Եվրո,** իսկ **Փուլ 2** (BMZ N° 2012 66 956) ծրագրի **18.5 մլն. Եվրո** վարկային միջոցներից շինարարության համար նախատեսված է **17.4 մլն. Եվրո** գումար: Արդյունքում՝ նույնիսկ միավորելով Փուլ 1 և Փուլ 2 ծրագրերի առկա **վարկային միջոցները՝ 59.3 մլն. Եվրո**, կպահանջվի ևս **9.6 մլն. Եվրո (առանց ԱԱՀ) (9,6 մլն Եվրո = 68,9 մլն Եվրո - 59,3 մլն Եվրո)** լրացուցիչ միջոցներ, որից **2,2 մլն Եվրոն (առանց ԱԱՀ)** վարկային միջոցների պակասուրդ լրացման համար, իսկ **7,4 մլն Եվրոն (առանց ԱԱՀ)՝** չնախատեսված ծախսերի կատարման համար՝ անհրաժեշտության դեպքում հետագայում ապահովելու պայմանով:

			հազ. Եվրո
Ծրագիր/միջոցառում	*Պայմանագրի ընդամենը գումար*		
	Ընդամենը	Վարկային միջոցներ	ՀՀ կառ. համաֆին.
1004 - 31004 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում - **Փուլ 1**	**61,779.8**	41,888.7	19,891.1
1004 - 31006 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում - **Փուլ 2**	**20,880.0**	17,400.0	3,480.0
Ընդամենը	**82,659.8**	**59,288.7**	**23,371.1**

«Կապսի ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցում» շինարարական աշխատանքների պայմանագիրը կկնքվի վերոնշյալ պահանջվող հավելյալ միջոցների առկայության դեպքում, ուստի անհրաժեշտ գումարները ներառվել են ՀՀ 2024-2026թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի նախագծերում՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներից ֆինանսավորվելու նպատակով:

Ծրագրի շինարարական աշխատանքները նախատեսվում է մեկնարկել 2023թ. ամսին՝ շուրջ 3 տարի ժամկետով: Թերությունների վերացման և երաշխիքային գումարների վճարման գործընթացները նախատեսվում է իրականացնել 2026թ.-ին:

«***31004 - Գերմանիայի զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում»*** միջոցառում, որով նախատեսված են կապիտալ ծախսերը, համապատասխանաբար՝ **9,962,222.2 հազ. դրամ** (23,116.4 հազ. Եվրո), **6,281,234.3 հազ. դրամ** (14,575.0 հազ. Եվրո) և **1,282,441.4 հազ. դրամ** (2,975.8 հազ. Եվրո) գումարներով՝ հաշվարկված **1 Եվրո=430.96 ՀՀ դրամ** փոխարժեքով:

«***11007 - Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարում ծրագրի խորհրդատվություն և կառավարում»*** միջոցառում, որով նախատեսված միջազգային փորձագետների ծառայությունների դիմաց վճարումները, ինչպես նաև՝ պահպանման ծախսերը, համապատասխանաբար՝ **129,406.3 հազ. դրամ** (300.3 հազ. Եվրո), **116,908.5 հազ. դրամ** (271.3 հազ. Եվրո) և **112,565.7 հազ. դրամ** (261.2 հազ. Եվրո) գումարներով՝ հաշվարկված **1 Եվրո=430.96 ՀՀ դրամ** փոխարժեքով:

«***11008 - Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարման ծրագրի երկրորդ փուլի խորհրդատվություն և կառավարում»*** միջոցառում, որով նախատեսված են 2024թ. վճարելու խորհրդատվական ծառայությունների դիմաց **568,867.2 հազ. դրամ** (1,320.0 հազ. Եվրո) գումարով՝ հաշվարկված **1 Եվրո=430.96 ՀՀ դրամ** փոխարժեքով:

«***31006 - Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում»*** միջոցառում, որով նախատեսված են Կապսի ջրամբարի կառուցման համար անհրաժեշտ կապիտալ ծախսերի մի մասը, վճարումները նախատեսվում է 2024-2026 թվականներին, համապատասխանաբար՝ **258,576.0 հազ. դրամ** (600.0 հազ. Եվրո), **5,740,387.2 հազ. դրամ** (13,320.0 հազ. Եվրո) և **2,999,481.6 հազ. դրամ** (6,960.0 հազ. Եվրո) գումարներով՝ հաշվարկված **1 Եվրո=430.96 ՀՀ դրամ** փոխարժեքով:

11009 «Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարման դրամաշնորհային ծրագիր».

Համաձայն ՀՀ կառավարության 06.06.2019թ. № 735-Ն որոշման՝ ՀՀ և Վերականգնման վարկերի բանկի միջև 18.07.2019թ. ստորագրվել է «Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ, փուլ 1» ծրագրի շրջանակներում մատուցվելիք փորձագիտական ծառայություններն իրականացնելու նպատակով 300.0 հազ. Եվրո գումարի չափով դրամաշնորհային համաձայնագիրը:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է ֆինանսավորել «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Կապսի ջրամբարի կառուցման Փուլ I փուլի փորձագիտական ծառայությունների իրականացումը՝ շրջակա միջավայրի վրա սոցիալական գնահատման (ՇՄՍԱԳ) և այլ խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում:

Միջոցառմամբ նախատեսված գումարը կազմում է համապատասխանաբար՝ **25,534.8 հազ. դրամ** (59.3 հազ. Եվրո), **25,534.8 հազ. դրամ** (59.3 հազ. Եվրո) և **25,534.8 հազ. դրամ** (59.3 հազ. Եվրո) գումարներով՝ հաշվարկված **1 Եվրո=430.96 ՀՀ դրամ** փոխարժեքով:

«Ախուրյան գետի ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում ծրագրի Փուլ 1-ին» ծրագիրն ընդգրկում է Կապսի պատվարի և ջրամբարի կայունացում, վերականգնում և շինարարություն: Կապսի ջրամբարի կառուցման հետևանքով անհրաժեշտություն է առաջանում հողերի ձեռքբերման և Ազդակիր Անձանց/Ազդակիր ՏՏ-ների վերաբնակեցման, մասնավորապես ջրամբարի տարածքից, ինչպես նաև այնպիսի օժանդակ կառույցների տեղափոխման, ինչպիսիք են ճանապարհները, ոռոգման ջրանցքները և էլեկտրամատակարարման օդային գծերը: Ամենամեծ խնդիրը Ջրաձոր գյուղի վերաբնակեցումն է:

Ծրագրի շրջանակներում Իրականացման Խորհրդատուն կատարել է այն տարածքի թեքության կայունության ուսումնասիրություն, որտեղ տեղակայված է Ջրաձոր համայնքը: Ուսումնասիրության արդունքները ցույց են տվել, որ պատվարի կառուցման երկու փուլերում էլ բնակատեղի անվտանգությունը կխախտվի, ինչպես նաև կհեղեղվի դրա մոտեցման ճանապարհը: Ավելի կոնկրետ, ուսումնասիրությունից ակնհայտ է դարձել, որ նույնիսկ առանց պատվարի և ջրամբարի կառուցման, Ջրաձորի որոշ հատվածներ երկրաշարժի ընթացքում կարող են սահել դեպի ձորը՝ աշխարհագրական անբարենպաստ պայմաններից ելնելով: Այս եզրահանգմանն են եկել նաև 1980-ականներին իրականացված ուսումնասիրությունները: Հետևաբար, հիմք ընդունելով գնահատման արդյունքները, առաջարկվել է տեղափոխել Ջրաձոր գյուղը:

Fichtner GmbH & Co. KG միջազգային խորհրդատվական ընկերության կողմից «Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում» խորհրդատվական ծառայությունների շրջանակում մշակվել է «Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման գործողությունների պլան» (ՀՁՎԳՊ) փաստաթուղթը, որում հաշվարկված նախնական գումարը կազմում էր 5,176,885.5 հազ. ՀՀ դրամ: Փաստաթղթում ներառված են այն պարտավwրությունները, ընթացակարգերը և գործողությունները, որոնք իրականացվելու են Ծրագրի ազդակիր անձանց, տնային տնտեսություններին վերաբնակեցնելու և փոխհատուցումներ տրամադրելու ուղղությամբ: Ծրագրի իրավական և քաղաքականության շրջանակի համար հիմք են հանդիսանում Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը, «KfW» բանկի կայուն զարգացման ուղեցույցն ու ՀԲ Գործառնական քաղաքականությունները (ԳՔ): Հարկադիր վերաբնակեցման մասով ՀՀ օրենքների և ՀԲ Գործառնական քաղաքականությունների միջև տարբերությունների կամ բացերի դեպքում կիրառվելու է Ազդակիր Անձանց/Ազդակիր ՏՏ-ների համար առավել շահավետ դրույթը:

ՀՁՎԳՊ-ի շրջանակներում հատկորոշվել են Ծրագրի բոլոր ազդակիր ֆիզիկական և իրավաբանական անձինք, գնահատվել է ազդեցության չափը, ինչպես նաև միջազգային չափանիշների և ՀՀ օրենսդրության համաձայն պարզաբանվել իրավունքի շրջանակը և ուրվագծվել համապատասխան փոխհատուցումները, եկամտի վերականգնման ու վերաբնակեցման գործողությունները: ՀՁՎԳՊ-ում նկարագրված է փոխհատուցման և վերաբնակեցման գործողությունների իրականացման ժամանակացույցն ու կազմակերպչական միջոցառումները: ՀՁՎԳՊ-ով ներկայացված փոխհատուցումների տրամաբանությամբ, Ծրագրի ազդեցություններից ԱԱ-ների կենսապայմաններն ու կյանքի որակը չպետք է վատթարանան, այլ ընդհակառակը, առնվազն վերականգնվեն մինչև Ծրագրի մեկնարկն ունեցած մակարդակին: Ազդակիր տարածքներում գտնվող բոլոր մասնավոր հողերը ձեռք են բերվելու կամ փոխարինվելու են համաձայն սույն ՀՁՎԳՊ-ի դրույթների, քանի որ այս տարածքներում Ծրագրի ազդեցությունը մշտական է լինելու, այսինքն հողերը/անշարժ գույքը ազդեցության արդյունքում դուրս են գալու տնտեսական շրջանառությունից:

Ծրագրի այս փուլում նախագծային որոշ տվյալներ դեռ վերջնական չեն և Ծրագրի հետագա փուլերում դեռ կարող են փոխվել, ուստի ՀՁՎԳՊ-ն մշակվել է նկատի ունենալով հնարավոր առավելագույն ազդեցությունը Հողօգտագործման և Վերաբնակցման տարածքների վրա: ՀՁՎԳՊ-ի մշակման համար հիմք են հանդիսացել

Ծրագրի բոլոր ԱԱ-ների մանրամասն մարդահամարը, յուրաքանչյուր ազդագիր գույքի մանրամասն չափագրումը, ուսումնասիրությունը, կորուստների գույքագրումը, ինչպես նաև քննարկումները ԱԱ/ԱՏՏ- ների և այլ շահառուների, ինչպիսիք են ՏԻՄ-երը, ՀԿ-ները և այլն: Ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ ԱՏՏ-ների 83%-ը նախընտրում են վերաբնակեցումը նոր կառուցվող գյուղում, իսկ 12,8%-ը՝ դրամական փոխհատուցումը, 4,2 %-ը չի ընտրել փոխհատուցման վերոնշյալ տարբերակներից ոչ մեկը:

Փոխհատուցման իրավունք է վերապահված այն բոլոր ԱԱ-ներին, որոնք ժամանակավոր կամ մշտապես կկորցնեն իրենց հողատարածքը կամ սեփականությունը կամ դրա հասանելիությունը (օրինական կարգավիճակ ունեցող հողատարածքներ, օրինականացման ենթակա հողատարածքներ, կամ առանց օրինական կարգավիճակի հողերը), վարձակալներին կամ հողօգտագործողներին՝ անկախ իրավունքի գրացված լինելուց կամ չլինելուց, ինչպես նաև մշակաբույսերի կամ հողին կից այլ օբյեկտների/կառույցների սեփականատերերին:

ՀՁՎԳՊ-ի մշակման փուլում վերաբնակեցման հնարավոր վայրի մասին ԱԱ-ների և այլ շահառուների հետ քննարկումներ են իրականացվել, և առաջարկվող վերաբնակեցման տեղանքի շուրջ ստացվել է Ամասիա համայնքի ավագանու նախնական համաձայնությունը, ինչպես նաև Քաղաքաշինության կոմիտեի «Կարող է դիտարկվել որպես վերաբնակեցման տարածք» նախնական եզրակացությունը:

ՀՁՎԳՊ-ի իրականացումը (փոխհատուցման վճարումները և ԱԱ-ների արդյունավետ վերաբնակեցումը) մշտադիտարկվելու է Արտաքին մշտադիտարկող խորհրդատուի կողմից և արդյունքները ներկայացվելու են հաշվետվությունների տեսքով:

ՀՁՎԳՊ-ն առաջարկում է նաև ծրագրի հետևանքով կրած կենսապահովման միջոցների վրա ազդեցությունների մեղմման լիարժեք միջոցառումներ: Ծրագիրը հետևաբար նաև աջակցելու է ԱՏՏ-ներին (հատկապես խոցելի տնային տնտեսություններին) կենսապահովման միջոցների և կենսապայմանների վերականգնման ուղղությամբ:

10 <u>Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարում փուլ 1 ծրագրով Ջրաձոր գյուղի վերաբնակեցման գործողությունների խորհրդատվություն և կառավարում</u>

ՀՀ կառավարության 27.08.2020թ. № 1411-Լ որոշմամբ հաստատվել է Ջրաձոր գյուղի «Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման գործողությունների պլանը» (ՀՁՎԳՊ), որով նախատեսվում է մինչև 2026թ. իրականացնել ՀՀ Շիրակի մարզի Ջրաձոր համայնքի վերաբնակեցման գործընթացը՝ Կապսի ջրամբարի կառուցման նպատակով: Ծրագիրը ֆինանսավորվելու է միայն ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներով և ընդհանուր բյուջեն կազմում է **<u>4,950,011,494.52 ՀՀ դրամ</u>**:

Հ/հ	Անվանումը	ՀՀ դրամ
1	Գյուղի վերակառուցման և համապատասխան ենթակառուցվածքների կառուցման բյուջեն	3,040,764,102.40
2	Ընդամենը նախագծման արժեքը	28,607,799.95
3	Ազդակիր բնակավայրերի հողամասերի տարբերության փոխհատուցում	3,957,709.54
4	Մասնավոր գրացված և գրանցում չունեցող գյուղատնտեսական հողերի փոխհատուցում	108,277,509.75
5	Համայնքային գրացված և գրանցում չունեցող հողերի ձեռք բերում	88,092,646.44
6	Վարձակալության և ենթավարձակալության փոխհատուցում	1,619,772.70
7	Շինությունների փոխհատուցում (առանց տների, դպրոցի և գյուղապետարանի)	818,374,542.57
8	Մշակաբույսերի դիմաց փոխհատուցում	1,815,532.60
9	Ծառերի դիմաց փոխհատուցում	63,497,534.89
10	Գրանցման ծախսեր	17,080,000.00
11	Ձեռնարկատիրական գործունեության մշտական դադարեցում	1,440,000.00
12	Պլանավորված ՓՀԷԿ-երի փոխհատուցում	75,337,895.00
13	ՀՁՎԳՊ իրականացման խորհրդատվական ծառայություններ	276,097,978.80
14	ՀՏՋՀ անձնակազմի կարողությունների զարգացում (Ջրաձոր բնակավայրի/գյուղի վերաբնակեցման գործողությունների կառավարման շրջանակներում պահպանման ծախսեր)	80,000,000.00
15	Խիստ ազդեցության դիմաց օժանդակություն	32,505,636.80
16	Դրամական օժանդակություն սոցիալապես խոցելի խմբերին	5,304,000.00
17	Տրանսպորտային ծախսերը հոգալու օժանդակություն	1,491,000.00
18	Կոոպերատիվի սարքավորումների (ներառյալ կաթի հավաքման կետի) ձեռք բերման և տեղադրման բյուջե	34,547,000.00
19	Սիլոսահավաք մեքենա	33,300,000.00
20	Աշխատանքի կորուստ	2,160,000.00
21	Չնախատեսված ծախսեր 5%	235,714,833.07
	Ընդամենը բյուջե (ՀՀ դրամ)	**4,950,011,494.52**

2020թ. սկսվել են համապատասխան կազմակերպչական գործընթացները, կնքվել են խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրեր: 2022թ. մեկնարկել են գյուղի կառուցման նախագծահետազոտական աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել 2023 թվականին: Արդյունքում՝ կիստակեցվի շինարարական աշխատանքների ճշգրտված արժեքը և «Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման գործողությունների պլանը» (ՀՁՎԳՊ) բյուջեի հոդվածային վերաբաշխման անհրաժեշտություն կառաջանա՝ ՀՀ կառավարության 27.08.2020թ. № 1411-Լ որոշման համապատասխան փոփոխության միջոցով:

ՀՁՎԳՊ-ի ազդակիր անձանց փոխհատուցումների և օժանդակությունների տրամադրման աշխատանքների կազմակերպման հանձնաժողովը ձևավորվել է ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեի նախագահի 2022 թվականի նոյեմբերի 11-ի հրամանով և իր աշխատանքները սկսել է 2022 թվականի հունվարի 24-ից:

Միջոցառման իրականացումը կշարունակվի 2024-2026թթ. և նախատեսված գումարը կազմում է համապատասխանաբար՝ **424,085.0 հազ. դրամ, 231,516.9 հազ. դրամ** և **119,323.6 հազ. դրամ**:

11 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարման փուլի 1 ծրագրով

Ջրածոր գյուղի վերաբնակեցման համար ենթակառուցվածքների և բնակելի տների կառուցում

Միջոցառման իրականացումը կշարունակվի 2024-2026թթ. և նախատեսված գումարը կազմում է համապատասխանաբար՝ **1,486,847.0 հազ. դրամ,** ՝ **900,306.1 հազ. դրամ,** և **632,030.7 հազ. դրամ**:

12 11011 - Զարգացման ֆրանսիական գործակալության աջակցությամբ իրականացվող ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության և ոռոգման կառավարման կարողությունների բարելավման դրամաշնորհային ծրագրի խորհրդատվություն և կառավարում

Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ կառավարությանը ոռոգման ոլորտի ընթացիկ բարեփոխումների հարցում՝ կենտրոնական և տեղական մակարդակներում կարողությունների զարգացման և ջրօգտագործողների միավորումներին տրամադրվող սուբսիդիաների կրճատման միջոցով, ներդնել նորարարական կայուն մեխանիզմներ՝ ուղղված ոռոգվող գյուղատնտեսության տնտեսական զարգացման խոչընդոտներին: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2024-2026 թվականներին վերոնշյալ միջոցառման միջոցով և նախատեսված գումարը կազմում է համապատասխանաբար՝ **314,600.8 հազ. դրամ** (730.0 հազ. Եվրո), **232,718.4 հազ. դրամ** (540.0 հազ. Եվրո) և **77,572.8 հազ. դրամ** (180.0 հազ. Եվրո) գումարներով՝ հաշվարկված **1 Եվրո=430.96 ՀՀ դրամ** փոխարժեքով:

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

1. **Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում իրականացվող միջոցառումներ.**

27.12.2013թ. ՀՀ կառավարության և KFW բանկի միջև կնքվել է «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II - 3 փուլ» ծրագրի համաձայնագիրը, որի շրջանակներում ջրային համակարգին հատկացվող վարկի գումարը կկազմի 30.0 մլն. Եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորումը՝ 6.0 մլն. Եվրո: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է 11 քաղաքների և 37 գյուղական բնակավայրերի, որոնց քանակը նախատեսվում է ավելացնել նոր կնքվելիք պայմանագրերի շրջանակներում կատարվելիք աշխատանքների միջոցով, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ վերականգնման աշխատանքների, բաշխիչ ցանցերի վերականգնման, Գյումրի քաղաքի առավել ռիսկային կետերի (Աթոյան, Շիրակացի, Ղուկասյան փողոցների) կոյուղու համակարգի վերականգման, Վանաձոր, Արմավիր քաղաքների ջրամատակարարման համակարգի նորացման, ինչպես նաև թվով 3 ջրամբարների կառուցման աշխատանքների որոշ մասի իրականացումը (ԵՆԲ վարկի հետ համատեղ ֆինանսավորում):

Ծրագրի 2016թ. սկսված աշխատանքները կշարունակվեն 2024-2025թթ. հետևյալ միջոցառմամբ.

«***31001 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում»*** միջոցառում, որով նախատեսված են շինարարական և նախագծահետազոտական աշխատանքները, համապատասխանաբար՝ **3,714,444.2 հազ. դրամ** (8,619.0 հազ. Եվրո), և **2,089,135.9 հազ. դրամ** (4,847.6 հազ. Եվրո) գումարներով՝ հաշվարկված **1 Եվրո=430.96 ՀՀ դրամ** փոխարժեքով:

«***11007 Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգման ծրագրի երրորդ փուլ»*** միջոցառում, որով նախատեսված են կատարել Գերմանիայի զարգացման վարկերի բանկի, Եվրոպական ներդրումային բանկի և Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ համատեղ իրականացվող «Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3 - Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք» ծրագրի ֆինանսական և տեխնիկական աուդիտի աշխատանքները 2024-2025թթ. ընթացքում՝ համապատասխանաբար՝ **45,509.4 հազ. դրամ** (105.6 հազ. Եվրո), **45,457.7 հազ. դրամ** (105.5 հազ. Եվրո) և **41,535.7 հազ. դրամ** (96.4 հազ. Եվրո) գումարներով՝ հաշվարկված **1 Եվրո=430.96 ՀՀ դրամ** փոխարժեքով:

Աուդիտի անցկացման պահանջն ամրագրված է վարկային համաձայնագրով և հանդիսանում է պարտադիր պայման ծրագրի հետագա ընթացքի ապահովման համար, ուստի այս միջոցառման ծախսերը պարտադիր ծախսային պարտավորություն են: Միջոցառման իրականացման համար հավելյալ միջոցները անհրաժեշտ չեն՝ կիրականացվի վերոնշյալ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող վարկային միջոցների և ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցների (վարկի գումարը - 30.0 մլն. Եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորումը - 6.0 մլն. Եվրո) շրջանակներում:

2. ՀՀ կառավարության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 27.06.2014թ. կնքվել է «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II - 3 փուլ» ծրագրի ֆինանսական պայմանագիրը, որի շրջանակներում հատկացվող վարկի գումարը կազմում է 16.7 մլն Եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորումը՝ 3.3 մլն. Եվրո: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է 11 քաղաքների և 37 գյուղական բնակավայրերի, որոնց քանակը նախատեսվում է ավելացնել խնայողությունների հաշվին կատարվելիք աշխատանքների շրջանակներում, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ վերականգնման աշխատանքների, բաշխիչ ցանցերի վերականգնման, Գյումրի քաղաքի առավել ռիսկային կետերի (Աթոյան, Շիրակացի, Ղուկասյան փողոցների) կոյուղու համակարգի վերականգման, Վանաձոր, Արմավիր քաղաքների ջրամատակարարման համակարգի նորացման, ինչպես նաև թվով 3 ջրամբարների կառուցման աշխատանքների մնացած մասի իրականացումը (ՎՎԲ (KfW) վարկի հետ համատեղ ֆինանսավորում):

Ծրագրի 2016թ. սկսված աշխատանքները կշարունակվեն 2024-2025թթ. հետևյալ միջոցառման միջոցով.

«***31002 Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում»*** միջոցառում, որով նախատեսված են շինանարարական և նախագծահետազոտական աշխատանքները, համապատասխանաբար՝ **1,960,347.4 հազ. դրամ** (4,548.8 հազ. Եվրո) և **944,868.7 հազ. դրամ** (2,192.5 հազ. Եվրո) գումարներով՝ հաշվարկված **1 Եվրո=430.96 ՀՀ դրամ** փոխարժեքով:

3. **Գերմանիայի զարգացման վարկերի բանկի և Եվրոպական միության Հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի շրջանակներում իրականացվող միջոցառումներ.**

14.05.2014թ. ՀՀ կառավարության և Գերմանիայի զարգացման բանկի միջև կնքվել է «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II - 3 փուլ (ԵՄ ՀՆԳ-ի բաղկացուցիչ)- Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք (Ծրագիր թիվ 30375)» 15 մլն Եվրո արժեքով դրամաշնորհային ծրագրի իրականացման ֆինանսավորման համաձայնագիրը (այդ թվում՝ 12.0 մլն. Եվրո ներդրումային դրամաշնորհ և 3 մլն. Եվրո տեխնիկական դրամաշնորհ), որի շրջանակներում նախատեսվում է ջրամատակարար ընկերությունների կազմից դուրս մնացած 579 գյուղական բնակավայրերից ընտրված հինգ համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ վերականգնման աշխատանքների իրականացում, ինչպես նաև՝ Արմավիրի տարածաշրջանը գտնվում է համաճարակի առաջացման բարձր ռիսկային գոտում, ինչի արդյունքում խիստ անհրաժեշտություն է առաջացել կեղտաջրերի մաքրման կայան կառուցելու համար: Այս ծրագրի ֆինանսավորմամբ նախատեսվում է լճակային սկզբունքով գործող կեղտաջրերի մաքրման կայանի կառուցում, կոյուղու պոմպակայանի, կոլեկտորի, կոյուղու ցանցի վերականգնում, ինչը թույլ կտա Արմավիր և Մեծամոր քաղաքների ու Նորապատ համայնքի կեղտաջրերի մաքրման իրականացումը:

Սույն ծրագրի շրջանակներում հատկացվող ներդրումային դրամաշնորհի գումարը կկազմի 12.0 մլն. Եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորումը՝ 2.4 մլն. Եվրո:

Աշխատանքները կիրականացվեն 2023-2025թթ. հետևյալ միջոցառման միջոցով.

«***12001 Գերմանիայի զարգացման և Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների դրամաշնորհային ծրագիր՝ երրորդ փուլ»*** միջոցառում, որով նախատեսված են շինարարական և նախագծահետազոտական, տեխնիկական և հեղինակային վերահսկողության աշխատանքները, համապատասխանաբար՝ **2,985,344.3 հազ. դրամ** (6,927.2 հազ. Եվրո) և **2,037,232.3 հազ. դրամ** (4,727.2 հազ. Եվրո) գումարներով՝ հաշվարկված **1 Եվրո=430.96 ՀՀ դրամ** փոխարժեքով:

4. <u>Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումներ.</u>

24.06.2014թ. ՀՀ կառավարության և ԵՆԲ բանկի միջև կնքվել է «Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր» ֆինանսավորման պայմանագիրը, որի շրջանակներում Երևանի ջրային համակարգին հատկացվող վարկի գումարը կկազմի 7.0 մլն. ԱՄՆ դոլար: Ծրագրի շրջանակներում կիրականացվեն Երևանի ջրամատակարարման ցանցի բարելավման աշխատանքներ, առանձնատների մոտ անհատական ջրաչափերի փոխարինման, դիտահորերի տեղադրման, 30 մղիչ հնամաշ պոմպերի փոխարինման և այլ աշխատանքների որոշ մասը (ՎԶԵԲ-ի և ԵՄ Հարևանության ներդրումային Ծրագրի հետ հավասար հիմունքներով ֆինանսավորում): Սիլիկյան, Մալաթիա և Հաղթանակ թաղամասերի երկու փաթեթների շինարարական աշխատանքները նախատեսվում է սկսել 2022թ., իսկ ծրագրի շրջանակներում առկա խնայողությունների հաշվին նախատեսվում է Արարատյան պոմպակայանի երեք պոմպերի փոխարինման, Փիրումյան թաղամասի, Բալահովիտ և Փարաքար համայնքների, ինչպես նաև՝ Նոր Խարբերդ և հարակից թաղամասերի ջրամատակարարման համակարգերի բարելավման աշխատանքների կատարումը:

Աշխատանքները կշարունակվեն 2024-2025թթ. հետևյալ միջոցառումների միջոցով.

«31003 - Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառում, որով նախատեսված են շինարարական աշխատանքների իրականացում, համապատասխանաբար՝ **<u>1,489,617.7 հազ. դրամ</u>** (3,081.7 հազ. ԱՄՆ դոլար) և **<u>229,319.3 հազ. դրամ</u>** (474.4 հազ. ԱՄՆ դոլար) գումարներով՝ հաշվարկված **<u>1 ԱՄՆ դոլար=483.38 ՀՀ դրամ</u>** փոխարժեքով:

«11005 - Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր» միջոցառում, որով նախատեսված են խորհրդատվական ծառայությունների և միայն ՀՀ կառավարության միջոցներով նախատեսված պահպանման ծախսեր, համապատասխանաբար՝ **<u>140,882.9 հազ. դրամ</u>** (356.0 հազ. ԱՄՆ դոլար) և **<u>140,519.8 հազ. դրամ</u>** (355.1 հազ. ԱՄՆ դոլար) գումարներով՝ հաշվարկված **<u>1 ԱՄՆ դոլար=395.74 ՀՀ դրամ</u>** փոխարժեքով:

5. <u>Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագիր</u>

06.08.2014թ. և 28.07.2016թ. ՀՀ կառավարության և ԵՆԲ բանկի միջև կնքվել է «Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր» ֆինանսավորման պայմանագիրը, որի շրջանակներում Երևանի ջրային համակարգին հատկացվող վարկի գումարը կկազմի 5.5 մլն եվրո (7.0 մլն ԱՄՆ դոլար): Երևանի

ջրամատակարարման բարելավման ծրագիրը հավասար հիմունքներով կֆինանսավորվի Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) կողմից տրամադրվող 7.0 մլն ԱՄՆ դոլար և Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) կողմից տրամադրվող 7.0 մլն ԱՄՆ դոլար միջոցներով: Ծրագրի շրջանակներում կիրականացվեն Երևանի ջրամատակարարման ցանցի բարելավման աշխատանքներ, առանձնատների մոտ անհատական ջրաչափերի փոխարինման, դիտահորերի տեղադրման, 30 մղիչ հնամաշ պոմպերի փոխարինման և այլ աշխատանքների որոշ մասը (ՎԶԵԲ-ի և ԵՆԲ-ի հետ հավասար հիմունքներով ֆինանսավորում): Սիլիկյան, Մալաթիա և Հաղթանակ թաղամասերի երկու փաթեթների շինարարական աշխատանքները նախատեսվում է սկսել 2022թ., իսկ ծրագրի շրջանակներում առկա խնայողությունների հաշվին նախատեսվում է Արարատյան պոմպակայանի երեք պոմպերի փոխարինման, Փիրումյան թաղամասի, Բալահովիտ և Փարաքար համայնքների, ինչպես նաև՝ Նոր Խարբերդ և հարակից թաղամասերի ջրամատակարարման համակարգերի բարելավման աշխատանքների կատարումը:

Աշխատանքները կշարունակվեն 2024-2025թթ. հետևյալ միջոցառումների միջոցով. **«31004 - Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում»** միջոցառում, որով նախատեսված են շինարարական աշխատանքների իրականացումը, համապատասխանաբար՝ **1,021,009.2 հազ. դրամ** (2,580.0 հազ. ԱՄՆ դոլար) և **603,181.3 հազ. դրամ** (635.5 հազ. ԱՄՆ դոլար) գումարներով՝ հաշվարկված **1 ԱՄՆ դոլար=395.74 ՀՀ դրամ** փոխարժեքով:

«11004 - Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառում, որով նախատեսված են աուդիտի ծախսեր, համապատասխանաբար՝ **4,748.9 հազ. դրամ** (12.0 հազ. ԱՄՆ դոլար) և **2,734.4 հազ. դրամ** (6.0 հազ. ԱՄՆ դոլար) գումարով՝ հաշվարկված **1 ԱՄՆ դոլար=395.74 ՀՀ դրամ** փոխարժեքով: